# Քրիստոնյա Հայաստան

2005, ՄԱՅԻՍ Բ, ԹԻՎ 10 (198)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ



*Սիրելի ժողովուրդ հայոց*

*Հանրապետության Օրվա առիթով Հայրապետական սիրով ողջունում եւ շնորհավորում ենք ձեզ ի Հայաստան, Արցախ եւ ի Սփյուռս եւ բերում ամենքիդ լույսն ու օրհնությունը հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:*

*Պանծալի օր է այսօր: Մենք տոնում ենք 1918 թվականին Սարդարապատում, Ապարանում, Վանաձորում մեր ժողովրդի մղած մայիսյան հերոսամարտերի նվիրական ու փառապանծ հիշատակները: Գոյամարտ էր: Մեր ժողովուրդը Վարդանանց ոգով ու սխրանքով պաշտպանեց ու փրկեց մեր Հայրենիքի այս փոքրիկ հողակտորը եւ հռչակեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Գոյամարտ էր, եւ Մենք հաղթեցինք: Աստված կամեցավ, որ եղեռնահար սերունդը հայոց տոնի այդ հաղթանակը: Այն սերունդը, որը նայեց մահվան երեսին, բայց չերկնչեց մահվանից՝ ապավինած իր հայրերի Աստծուն, հավատավոր իր հոգու զորությանը:*

*Կրկնակի է մեր խնդությունն այսօր, քանզի այս տարի համընկել են Հանրապետության Օրը եւ հավատի մեր հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ Խոր Վիրապից ելնելու հիշատակի տոնը: Տոնում ենք հայոց պատմության երկու պայծառ ու հաղթական իրադարձություն՝ մահը մերժող իրենց հավերժական խորհրդով: Մայիս 28-ի լուսեղեն խորհրդի մեջ, մենք միավորում ենք հանուն հայրենյաց ու հավատի մեր բոլոր նահատակներին ու հերոսներին: Այսօր նրանք մեր կողքին են անմարմին, բայց իրական իրենց ներկայությամբ:*

*Փառք, խոնարհում եւ աղոթք նրանց անմահ հիշատակին:*

*Փառք ազատ ու անկախ Հայաստանին:*

*Փառք մեր հայրերի Աստծուն, որ արժանացրեց մեզ Հանրապետության Օրվա խորհրդով փառավորելու իր Սուրբ Անունը:*

*Սիրելի բարեպաշտ հայորդիներ:*

*Մխիթարություն ու քաջալերություն է Մեզ համար, որ նվիրված Հանրապետության Օրվան, մեր ժողովրդի զավակները նախաձեռնել են Միասնության շուրջպար բռնել Արագած լեռան շուրջ: Ոգեշնչող է աննախադեպ այս միջոցառումը իր նպատակով՝ արտահայտելու եւ արթուն պահելու մեր ժողովրդի սրտում միաբանության ոգին, որը առաջնորդել է մեզ հաղթանակների: Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Միասնության շուրջպարը մեր ժողովրդի կյանքում դառնա ուխտավորի պար եւ զորացնի մեր զավակների հավատարմության ոգին: Հավատարմությունը մեր հայրերի Աստծուն ու մեր հավատին, մեր Հայրենիքի սիրուն, մեր պատմությանը, ներկային ու գալիքին: Դառնա պար ուխտավորի, որ Արագածից վեր միշտ տեսնենք անմար Կանթեղը Լուսավորչի, «ասես Աստծո աչքը պայծառ», որ հսկում է երկնքից հայոց հողին, աշխարհասփյուռ հայոց ազգին:*

*Կուռ պահենք մեր շարքերը, եւ թող Միասնության շուրջպարը ընդարձակվի ու ընդարձակվի, շրջագծելով առ Աստված հավատավոր մեր երթի, հայոց խաղաղ, հայոց միացյալ ու պայծառ գալիքի հորիզոնները:*

*Մեր գնահատանքն ու Հայրապետական օրհնությունն ենք բերում Միասնության շուրջպարը կազմակերպող «Նիգ-Ապարան» հայրենակցական միության անդամներին՝ գլխավորությամբ նրա Պատվո Նախագահ Տիար Աղվան Հովսեփյանի եւ շուրջպարի բոլոր մասնակիցներին:*

*Թող Աստված խաղաղություն շնորհի աշխարհին համայն, մեր Հայրենիքին ու ժողովրդին, Իր ամենառատ շնորհների ներքո պարգեւի զորություն՝ շենացնելու ու բարգավաճ դարձնելու հայրենի մեր երկիրը, պահպանի բարօր, միաբան, հավատով ու նախնյաց ժառանգությամբ զորացյալ ու զարթյալ. ամեն:*

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

*Սիրեցյալ շրջանավարտներ,*

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրական սիրով Մեր օրհնությունն ու ջերմ շնորհավորանքներն ենք հղում ձեզ դպրոցական ուսումնառությունն ավարտելու գեղեցիկ առիթով:*

*Այսօր դուք շրջանավարտ եք կրթական առաջին հաստատության՝ դպրոցի, եւ կանգնած եք ձեր կյանքի մի նոր շրջանի նախաշեմին: Հաստատուն քայլերով եւ անսայթաք երթով ընթացեք ձեր կենաց շավիղներով, դպրոցում ամբարած ձեր գիտելիքները եւ հոգեւոր արժեքների ճանաչողությունն առավել զորացրեք ու կյանք դարձրեք ի սեր ձեր հոգում խնամքով փայփայած բարի իղձերի ու երազների իրականացման:*

*Սիրելիներ, Մեր հանապազ հայցն ու աղոթքն է, որ Աստված օրհնի ձեզ եւ ամենազոր Իր Աջը պահապան ու զորավիգ դարձնի ամենքիդ, որպեսզի զարդարյալ Իր երկնապարգեւ շնորհներով՝ աստվածահաճո ընթացքով, ազնիվ ու առաքինի գործերով կարողանաք շենացնել մեր Հայրենիքը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ ուրախություն պարգեւեք մեր ժողովրդին: Թող մեր հայրերի սուրբ հավատքի անմար ջահը հարաժամ լուսավորի ձեր կյանքի նոր ուղին եւ առաջնորդի դեպի արդարը, ճշմարիտը եւ բարին. ամեն:*

ՄԱՍՆՈՒՐ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Հայրապետական ուխտագնացություն Երուսաղեմ

Մայիսի 12-14-ը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շուրջ ութսուն ուխտավորների հետ հայրապետական ուխտագնացություն կատարեց Տերունի Սրբավայրեր:



Հայրապետական ուխտագնացության առաջին հանգրվանը Երուսաղեմն էր: Մայիսի 12-ին ուխտավորների խումբը, երուսաղեմահայերի հետ միասին, թափորով շարժվեց դեպի Սրբոց Հակոբյանց միաբանություն եւ Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ մուտք գործեց Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Սրբոց Հակոբյանց Մայր տաճար: Հավարտ եկեղեցական արարողության՝ Պատրիարքարանում կազմակերպվեց ընդունելություն, ուր ողջույնի խոսք ասաց Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արք. Մանուկյանը, ապա իր գնահատանքը հայտնեց Վեհափառ Հայրապետը:

Ուխտավորներն այնուհետեւ ծանոթացան Սրբոց Հակոբյանց տաճարին եւ վանական համալիրի եկեղեցիներին եւ մատուռներին, այցելեցին Պատրիարքարանի թանգարանն ու ձեռագրատունը, եղան հայոց Սրբոց Հրեշտակապետաց եւ Ս. Փրկիչ վանքերում, ապա այցելեցին Սիոն լեռան սրբավայրերը, Վերնատան եւ Տիրամոր ննջման տեղերում կառուցված եկեղեցիները:

Հաջորդ օրը սկսվեց Համբարձման լեռան սրբավայրեր այցելությամբ: Ուխտավորները նախ եղան 19-րդ դարում կառուցված «Հայր մեր»-ի եկեղեցում, որի շրջաբակում աշխարհի բազմաթիվ լեզուներով գրված է Տերունական աղոթքը: Ի դեպ, հայերենը երրորդն է լատիներենից եւ արաբերենից հետո: Այստեղ ուխտավորները Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ երգեցին Տերունական աղոթքը:



Ուխտավորներն այնուհետեւ եղան Ս. Համբարձման սրբավայրերում, որտեղից Հիսուսն օրհնեց աշակերտներին եւ երկինք համբարձվեց: Համբարձման լեռից ուխտավորներն իջան Գեթսեմանիի ձորը, ուր գտնվում է հայոց Ս. Աստվածածին եկեղեցին. այստեղից է երկինք վերափոխվել Ամենասուրբ Կույսն իր ննջումից հետո: Այստեղ են ամփոփված Տիրամոր ծնողները, որոնց շիրիմներին եւս իրենց խոնարհումը բերեցին հայ ուխտավորները:

Վերափոխման եկեղեցուն կից գտնվում է Գեթսեմանիի պարտեզը, ուր չարչարանաց ճանապարհին անցնելուց առաջ աղոթեց Հիսուսը: Դարավոր ձիթենիների հարեւանությամբ Հայոց Պատրիարքարանը կառուցել է Ս. Աստվածածին եկեղեցու ընդունելության սրահը, որի բացումը կատարվեց Վեհափառ Հայրապետի օրհնությամբ: Ուխտավորները եղան նաեւ Բոլոր ազգերի եկեղեցում, որը խորհրդանշում է քրիստոնեական եկեղեցիների միությունը՝ Հիսուս Քրիստոսով:

Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորած խումբն օրվա երկրորդ կեսին եղավ հրեական ողջակիզման Յադ Վաշեմ թանգարանում: Նրանց դիմավորեց եւ ուղեկցեց թանգարանի տնօրեն Ավներ Շալեւը:

Ողջակիզման զոհերի հուշարձան-տապանաքարին ուխտավորների խմբի կողմից զետեղվեցին ծաղկեպսակներ՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու եւ Հայաստանի Հանրապետության կողմից:

Նույն օրը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, ընդունելություն էին կազմակերպել Իսրայելի ասքենազյանների խախամապետ Ռաբբի Եոնա Մեցկերը եւ Ռաբբի Դեյվիդ Րոզենը: Ընդունելությանը ներկա էին Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը եւ Իսրայելի խորհրդարանի պատգամավորները:

*Շարունակությունը՝ էջ 2*

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

16 մայիսի

### Կիսլովոդսկի քաղաքապետին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Կիսլովոդսկի քաղաքապետ Սերգեյ Դեմիդենկոյին՝ քաղաքի հայ համայնքի ղեկավար Վալերի Գալուստովի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում կարեւորվեցին նման մակարդակի փոխայցելությունները, երկու բարեկամ ժողովուրդների միջեւ դարավոր կապերի զորացումն ու արդյունաշատ համագործակցությունը: Անդրադարձ կատարվեց հայ համայնքի կյանքին:

17 մայիսի

### Վրաստանի գլխավոր դատախազին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի գլխավոր դատախազ Զուրաբ Ադեիշվիլիին՝ ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը, ողջունելով բարձրաստիճան հյուրի անդրանիկ այցը Հայաստան եւ Սուրբ Էջմիածին, կարեւորեց պետական մակարդակի նման հանդիպումները, երկու պետությունների տարբեր կառույցների միջեւ ձեւավորվող սերտ հարաբերությունները եւ համագործակցությունը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ Վրաստանում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի կարգավիճակի խնդրին: Հայոց Հայրապետը վստահություն հայտնեց, որ այս, ինչպես եւ Վրաստանում գտնվող մի շարք հայկական եկեղեցիների շուրջ ստեղծված խնդիրները Վրաստանի իշխանությունների աջակցությամբ բարվոք լուծում կստանան:

19 մայիսի

### Ֆրանսիայի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց տեսչական առաքելությամբ Հայաստանում գտնվող Ֆրանսիայի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչներին՝ ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Անրի Կյունիի ուղեկցությամբ:

**«Մեր հոգին միշտ ուրախությամբ է լցվում, երբ Սուրբ Էջմիածին են այցելում ներկայացուցիչներ Ֆրանսիայից՝ ներկայացնելով Ֆրանսիայի բարեկամ ժողովուրդը եւ պետությունը: Առանձնակի ջերմությամբ ու բարեկամությամբ են հատկանշված մեր երկու պետությունների եւ ժողովուրդների հարաբերությունները, ինչը որոշակիորեն զգալի է թե՛ Ֆրանսիայում եւ թե՛ Հայաստանում»**,- նշեց Նորին Սրբությունը եւ բարեկամական մթնոլորտի ձեւավորման գործում կարեւոր նկատեց ինչպես երկու պետությունների եւ ֆրանսաբնակ հայ համայնքի ներդրումը, այնպես եւ Ֆրանսիայի դեսպանների առաքելությունը:

Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքը, սերն ու օրհնությունը փոխանցեց Ֆրանսիայի ժողովրդին եւ իշխանություններին՝ հիշատակելով նաեւ, որ Ֆրանսիան միակ պետությունն է, որ Հայոց Ցեղասպանությունը ճանաչել եւ դատապարտել է օրենքի ուժով:

### Իտալիայի տարածքային նախարարին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իտալիայի Հանրապետության տարածքային նախարար Էնրիկո Լա Լոջջայի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ Տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ:

Ողջունելով հյուրի անդրանիկ այցը Սուրբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց Հայրապետը կարեւորեց երկու երկրների միջեւ զարգացող հարաբերությունները՝ հույս հայտնելով, որ իրենց ջերմությամբ եւ արդյունավետությամբ դրանք ձեռք կբերեն այն մակարդակը, ինչպիսին Հայ եւ Կաթոլիկ Եկեղեցիների պարագայում է: Հայոց Հայրապետը նաեւ հիշեց երջանկահիշատակ Հովհաննես Պողոս Բ Պապի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ինչը համագործակցության նոր էջ բացեց երկու եկեղեցիների պատմության մեջ: **«Մեր ժողովուրդների համանմանությունները արդյունքն են մեր հավատի»**,- նշեց Հայոց Հայրապետը՝ կարեւոր նկատելով իրենց նկարագրով նույնական երկու ժողովուրդների միջեւ բարեկամական հարաբերությունների առավել ամրապնդումը:



Իտալիայի տարածքային նախարարն իր հերթին շնորհակալություն հայտնեց ընդունելության համար՝ նշելով, որ իր այցը չէր կարող ամբողջական լինել, եթե չայցելեր Սուրբ Էջմիածին:

Հանդիպման ընթացքում ՀՀ Տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրահամյանը ներկայացրեց քննարկումների արդյունքները եւ ռեգիոնալ համագործակցության ծրագրերը:

### Նիկոլայ Ռիժկովին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Դաշնային ժողովի անդամ, հայ-ռուսական միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի համանախագահ Նիկոլայ Ռիժկովին եւ նրա գլխավորած պատվիրակությանը:

**«Պրն. Ռիժկովին մեր ժողովուրդն առանձնահատուկ կերպով է սիրում եւ հարգում: ...Ձեր անձի միջոցով մեր ժողովուրդն իր սերն է արտահայտում նաեւ ռուս ժողովրդի նկատմամբ, որի հետ ունենք դարերի ջերմ բարեկամական, եղբայրական հարաբերություններ, որոնք ամրապնդվում են եւ զորանում շնորհիվ ձեզ պես նախանձախնդիր անձանց ինչպես Ռուսաստանի մեջ, այնպես եւ Հայաստանում, որոնք որ ամեն ջանք ի գործ են դնում՝ պահպանելու մեր ժողովուրդների եղբայրական բարի կապերը»**,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:



**«Երբ մենք գալիս ենք Հայաստան, մենք մեր պարտքն ենք համարում այցելել այս սրբավայրը՝ Սուրբ Էջմիածին, եւ հանդիպել Ձերդ Սրբությանը: ...Մենք միշտ արժեւորել ենք մեր հարաբերությունները, եւ մեր բարեկամությունը պատմական արմատներ ունի»**,- ասաց պրն. Ռիժկովը՝ շնորհակալություն հայտնելով ընդունելության համար եւ հիշելով դեռեւս 1988 թ. դեկտեմբերին՝ Հայաստանի համար դժվարին օրերին, երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ ունեցած իր հանդիպումը: Նա անդրադարձավ նաեւ Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների ջերմ բարեկամությանը՝ նշելով, որ կարեւորում է այն, որովհետեւ Եկեղեցիները շատ են օգնում բարոյական, ընկերային խնդիրների լուծման մեջ:

Հանդիպմանը ներկա էր նաեւ ՀՀ Գիտությունների ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը:

21 մայիսի

### ՌԴ Տարածքային զարգացման նախարարին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության տարածքային զարգացման նախարար Վլադիմիր Յակովլեւին եւ նրա պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին՝ Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց հայ համայնքի նկատմամբ ունեցած Վլ. Յակովլեւի հոգածությունն ու սերը: Նորին Սրբությունը մեկ անգամ եւս վերհիշեց նրա կարեւոր աջակցությունը Սանկտ Պետերբուրգում Սբ. Կատարինե հայոց եկեղեցու վերաբացման գործում: Ի գնահատության այս ջերմ վերաբերմունքի՝ 2000 թ. Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակով պրն. Յակովլեւն արժանացել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սբ. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանի:

**«Անչափ ուրախ ենք, որ այսօր նոր հնարավորություններ են ընձեռված, որպեսզի մեր ժողովրդի հետ ձեր կապերն առավել սերտացնեք ու զորացնեք: Ձեր հոգու սերն ու զգացումներն են, որ մղում են Ձեզ մեր ժողովրդի հետ այդ կապերը հարատեւ պահպանելու»**,- նշեց Ամենայն Հայոց Հայրապետը:

ՌԴ Տարածքային զարգացման նախարարը, շնորհակալություն հայտնելով ջերմ խոսքերի համար, կարեւորեց հայ-ռուսական հարաբերությունների եւ դարավոր կապերի ամրապնդումն ու զարգացումը:

Հանդիպմանը խոսվեց երկու երկրների համագործակցության ոլորտների եւ ապագա ծրագրերի մասին:

Հանդիպմանը ներկա էր Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը:

---

## Հայրապետական ուխտագնացություն Երուսաղեմ



Սկիզբը՝ էջ 1

Ուխտագնացության հաջորդ հանգրվանը Բեթղեհեմի Ս. Ծննդյան տաճարն էր: Բեթղեհեմ քաղաքի մուտքի մոտ Նորին Սրբության գլխավորած խումբը ընդունվեց զինվորական պատիվներով եւ առաջնորդվեց մինչեւ Ս. Ծննդյան տաճարը, որի մուտքին Հայոց Հայրապետին եւ ուխտավորներին ողջունեց տեղի հոգեւոր տեսուչ Տ. Ռազմիկ վրդ. Պողոսյանը:

Ընդունելությանը մասնակցում էին Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասի ներկայացուցիչ դոկտ. Էմիլ Ծաճուին, Բեթղեհեմի պետական գրասենյակի պետ Շատի Աբու Րամզիին եւ Պաղեստինյան ինքնավարության բարձրաստիճան այլ ներկայացուցիչներ:

Ս. Ծննդյան տաճարում ուխտավորները խոնարհվեցին Տիրոջ ծննդյան այրի եւ այն մսուրի առջեւ: Այնուհետեւ հյուրընկալվեցին տաճարի հայկական մասի հյուրասրահում:

Այստեղից ուխտավորներն ուղեւորվեցին Մեռյալ ծով, ապա վերադարձին դիտեցին Փորձության լեռը, եղան Երիքովում:

Երեկոյան ընդունելություն էր կազմակերպվել Ժառանգավորաց վարժարանում, ուր Նորին Սրբությանը եւ ուխտավորների խմբին ողջունեց Ժառանգավորաց վարժարանի տեսուչ Տ. Պարետ վարդապետը, ապա գեղարվեստական հայտագրով հանդես եկան վարժարանի սաները: Հանդիսության ընթացքում Երուսաղեմի հայ համայնքի յոթ անդամների հանդիսավոր պայմաններում հանձնվեցին Հայաստանի Հանրապետության անձնագրեր:

Այնուհետեւ խոսք ասացին ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, ՀՀ Գիտությունների ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը, բանաստեղծ Արամայիս Սահակյանը, Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը, Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը: Հանդիսությունն ավարտվեց Ամենապատիվ Պատրիարք Հոր եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով:

Ուխտագնացության վերջին՝ երրորդ օրը սկսվեց Սրբոց Հակոբյանց Մայր տաճարում մատուցված Հայրապետական ուխտի Պատարագով, իընթացս որի Նորին Սրբությունը բարձրորեն գնահատեց Երուսաղեմի Հայոց Պատրիարքության զինվորյալ միաբանության հոգեւոր սպասավորությանը՝ Սուրբ Երկրի Տերունական սրբավայրերին եւ այս սրբավայրերի հայկական բաժնի պահպանության համար:

Այնուհետեւ ուխտավորները շրջեցին քաղաքում՝ ծանոթանալով պատմական Երուսաղեմին, ապա Սրբոց Հակոբյանց Մայր տաճարից Վեհափառ Հայրապետի նախագահությամբ թափորով ուղեւորվեցին Ս. Հարության տաճարը: Տաճարում ուխտավորները նախ խոնարհվեցին Պատանատեղիի առջեւ, որի վրա Հովսեփ Արիմաթացին օծեց Հիսուսի խաչափայտից իջեցված մարմինը: Ի հիշատակ այս օծման՝ պատանատեղին շարունակ ցողվում է վարդաջրով: Իրենց հանդերձներն ու Ս. Երկրից տարվող հիշատակներն են ցողում նաեւ ուխտավորները: Նույնը կատարեցին եւ հայ ուխտավորները: Այստեղից ուխտավորներն ուղղվեցին դեպի Տիրոջ լույս գերեզմանը, որի վրա Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարված արարողությունից հետո խումբ առ խումբ խոնարհվեցին եւ համբուրեցին թափուր գերեզմանը: Ուխտավորները եղան Ս. Հարության տաճարի ներքո գտնվող Չարչարանաց վայրում, Ս. Պարտեզի, Ղուկյանոս հայրապետի, Հանդերձների բաժանման, Խաչի գյուտի, Լուսավորչի, Փշե պսակի, Հովսեփ Արիմաթացու եւ Ուշաթափման մատուռ-խորաններում եւ Ս. Գողգոթայում՝ հպարտություն ապրելով քրիստոնեական այս սրբավայրերում հայկական նշանակալից ներկայությամբ:

Եռօրյա ուխտագնացությունն ավարտվեց Ժառանգավորաց վարժարանում երեկոյան կազմակերպված ողջերթի ընթրիքով, ուր խոսք ասացին գրող Կարպիս Սուրենյանցը, Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանը եւ Հայաստանի բժշկական համալսարանի ռեկտոր Վիլեն Հակոբյանը:

Ուխտավորներին ողջերթի խոսքով դիմեց նաեւ Թորգոմ Պատրիարքը:

Ուխտավորները Հայաստան վերադարձան մայիսի 15-ին:

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՍԱՐԳԻՍ Ա ՍԵՎԱՆՑԻ
## (992 - 1019)

*Սկիզբը՝ թիվ 7, 9*

Այդ շրջանում Մանանաղի գավառը բյուզանդական տիրապետության տակ էր, եւ ամռանը երկրի գործերը բարեկարգելու համար կայսեր կողմից ուղարկվեց դատավոր Եղիան: Եկեղյաց գավառում նրան դիմավորեց իշխան Վրվեռը եւ նրան բողոքեց իր տունը կողոպտելու եւ գյուղը հրկիզելու համար: Այնուհետեւ դրա դիմաց նա մեծ հատուցում պահանջեց: Դեռեւս տեղյակ չլինելով մանրամասներին՝ դատավորը զինվորներ ուղարկեց՝ եպիսկոպոսներին շուտափույթ իր մոտ բերելու համար: Եպիսկոպոսների գլխավորն էլ, հրովարտակ գրելով, իր մոտ հրավիրեց բոլոր կղերականներին, երեցներին ու անապատականներին, որոնք ժամանելով մեծ բազմությամբ՝ շարժվեցին դեպի Եփրատի ափը, որտեղ նրա մեջ է թափվում Մանանաղի վտակը: Տեղատարափ անձրեւներից Եփրատը խիստ հորդացել էր, ուստի դատավոր Եղիայի զինվորները նավակով անցան գետը՝ Սամվել եպիսկոպոսին ու նրա եղբորորդի Թեոդոսին տեղափոխելու գետի մյուս ափը՝ Կոթեր գյուղը, որտեղ գտնվում էր Եղիան: Ժողովուրդը եպիսկոպոսներին պաշտպանեց եւ չհանձնեց զինվորներին, որոնք էլ խոստացան եպիսկոպոսներին տեղափոխելուց հետո անցկացնել նաեւ ժողովրդին: Համոզելով ժողովրդին՝ նրանք եպիսկոպոսներին անցկացրին գետի մյուս ափը եւ ձերբակալեցին:



Տեսնելով, որ խաբված է, եւ նավակը մտադիր չեն վերադարձնել, ժողովուրդը, չվախենալով անգամ հորդառատ գետից, ավելի լավ համարեց գետն անցնել կյանքը վտանգելով՝ քան իր հավատի առաջնորդներին ուղղված լուտանքի խոսքեր լսել: Տեսնելով, թե ինչպես ժողովուրդն առանց վնասվելու գետն անցավ՝ Եղիան հավատաց նախախնամությանը եւ հաջորդ օրը գնալով Փրրիսի եպիսկոպոսարանը՝ դատավարությունը հանձնեց ժողովրդի գլխավորներին, որոնք արդարադատության ատյան կանչեցին Վրվեռին: Կաշեցիները մեղավոր ճանաչվեցին իրենց սրբապիղծ արարքի համար, իսկ Վրվեռը, տեսնելով, թե ինչ պատիժ է իրեն սպասում, խոստացավ քաղկեդոնիկ կամ հոռոմ դառնալ եւ կաշառելով հոռոմ եպիսկոպոս Եպիսառատին՝ դարձավ նրա որդեգիրն ու ազատվեց պատժից: Սակայն նա դրանից հետո երկար չապրեց. հիվանդացավ գոդությամբ (բորոտությամբ) եւ մահացավ՝ մինչեւ կյանքի վերջը մնալով աղանդավոր: Ինչ վերաբերում է կաշեցիներին, ապա նրանց սաստիկ տանջանքներով ու ծեծով չարչարելով՝ հալածական դարձրին ու ավերեցին տները:

Եթե համեմատենք Եվրոպայի հետ, որտեղ միջին դարերում ահավոր չափերի էր հասել հավատաքննությունը, ապա Հայոց Եկեղեցին սկզբունքորեն հեռու էր բռնադատիչ միջոցների դիմելուց եւ խիստ պատիժների էր դիմում այն ժամանակ, երբ աղանդավորների գործողությունները վերածվում էին բռնությունների եւ քրեական բնույթ էին ձեռք բերում: Կաշեցիների պատիժը տվյալ դեպքում դասական օրինակ չէ, քանի որ այն մասամբ ժողովրդական կարգ ու կանոն չճանաչող զայրույթի արդյունք էր եւ մյուս մասով՝ հունական կամ բյուզանդական արդարադատության օրենքների կիրառման: Ասել անգամ, որ աղվեսադրոշմ խարանելը, որ կիրառում էին հայ քահանայապետերը, զուտ հայկական սովորույթ էր, նույնպես ճիշտ չէ, քանի որ այն նախապես կիրառվում էր հույների կողմից: Արդեն քրիստոնեության վաղնջա-



կան ժամանակներում աղանդներ եղել են, եւ թոնդրակյանները նորամուտ երեւույթ չէին հայ իրականության մեջ: Դեռեւս IV դարից սկսած՝ նրանց նախորդել են անապատականները, բորբորիտները, մծղնյացիները եւ պավլիկյանները: Հայ իրականության մեջ, գոնե մինչեւ Գրիգոր Մագիստրոսը, որն իրականում ներկայացնում էր կայսրությունը թոնդրակյաններին հալածելիս, աղանդավորների նկատմամբ բռնություններ կիրառելու քաղաքականություն չի իրականացվել:

Սարգիս Սեւանցի կաթողիկոսի օրոք բավական մեծ ազդեցություն ձեռք բերեց Տայքի կյուրապաղատությունը՝ Դավիթ կյուրապաղատի գլխավորությամբ: Նփրկերտի ու Ապահունիքի ամիրա Բատի մահվանից հետո Դավիթ կյուրապաղատը մեծ արշավանք սկսեց դեպի հարավ եւ գրավեց Մանազկերտը, որտեղից վտարեց արաբ բնակչությանը եւ ավերեց նրանց աղոթատները (մզկիթները): Դա առիթ ծառայեց Ատրպատականի ամիրա Մամլանին դեպի Մանազկերտ արշավելու համար՝ Բատի քեռորդի եւ հաջորդ Մրվան Ապումսար ամիրայի հետ միասին: Թշնամին հասավ մինչեւ Ծաղկոտն եւ Դիատին, սակայն Վաղարշակերտ քաղաքի մատույցներում հանդիպելով Գագիկ Ա թագավորի, Տայոց կյուրապաղատ Դավթի, Կարսի Աբաս եւ Վրաց Բագարատ թագավորների միացյալ ուժերին՝ խուսափեց ճակատամարտից եւ երկիրն ասպատակելով՝ վերադարձավ Ատրպատական: Շուտով արաբներից սպանվեց նրանց հետ թշնամացած Ապումսարը, եւ Դավիթ կյուրապաղատը զորքեր ուղարկեց Խլաթը գրավելու, սակայն 998 թվի Զատիկին նրանք պարտություն կրեցին: Մամլանն այս անգամ ավելի մեծ ուժերով հարձակվեց հայկական թագավորությունների եւ Դավիթ կյուրապաղատի իշխանության վրա: Հայկական թագավորությունների, Վրաց թագավորության եւ Տայքի կյուրապաղատության միացյալ ուժերը, որոնց հրամանատարն էր Վահրամ Պահլավունին, իսկ օգնականները՝ Տայոց զորավար Գաբրիել Ոչոպընտրյանը եւ վրաց զորավար Փերս Ջոջիկյանը, թշնամուն հանդիպեցին Մանազկերտի մոտակայքում եւ տեսնելով թշնամու մեծաթվությունը՝ զգուշացան ճակատ տալուց: Բանակում էր գտնվում հայոց հայրապետ Սարգիս Սեւանցին: 998 թ. հոկտեմբերի 18-ին թշնամին կամեցավ ճակատամարտի մեջ ներքաշել հայկական եւ վրացական միացյալ ուժերը, սակայն վերջիններս կրկին խուսափեցին դրանից: Այդ ժամանակ թշնամին ցրվելով սկսեց ավարառության ենթարկել երկիրը եւ թուլացրեց իր դիրքերը: Վահրամ Պահլավունին անմիջապես օգտագործեց այդ նպաստավոր կացությունը եւ Ծմբո գյուղի մոտ ջախջախիչ հարված հասցրեց թշնամուն եւ հետապնդեց նրա նահանջող կամ փախուստի դիմած զորամասերին: Ինքը՝ Մամլանը, հրաշքով փրկվելով, ապաստան որոնեց Արճեշում:

Դավիթ կյուրապաղատը, չնայած նրա իշխանության հզորանալուն, անկախ տիրակալ չէր եւ կայսրության վասալն էր: Բոլորովին չնվազեցնելով այդ քաղկեդոնիկ կամ վրացադավան հայ իշխանի արժանիքները՝ լոկ նշենք, որ նա սկիզբը դրեց այն կործանարար քաղաքականության, որով հայ իշխանները եւ թագավորները սկսեցին կամովին կամ առանց դիմադրության Բյուզանդական կայսրությանը հանձնել իրենց տիրույթները՝ փոխարենն անհաստատ կալվածքներ ձեռք բերելով կայսրության բուն տարածքում: Դրա հետեւանքով Հայաստանում ազգային պետական կառույցներն աստիճանաբար քաղաքական ասպարեզից անհետացան: Դավիթ կյուրապաղատը եղբայր կամ ժառանգներ չուներ եւ որոշեց իր իշխանությունը կտակել Բյուզանդական կայսերը: Ասողիկի խոսքերով՝ նա մահացավ ծեր հասակում՝ 449 թվին կամ Ք. հ. 1000 թվականին, սակայն Մատթեոս Ուռհայեցին հայտնում է, որ նա դավադրության զոհ դարձավ:

*Շարունակությունը՝ էջ 4*

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան հանձնվեց լիբանանահայ հրապարակախոս Ժիրայր Նայիրի Թոսունյանին

Մայիսի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան հանձնեց լիբանանահայ գրող եւ հրապարակախոս, «Նայիրի» շաբաթաթերթի խմբագիր Ժիրայր Նայիրի Թոսունյանին՝ հասարակական եւ գրական-մշակութային արդյունաշատ գործունեության 55-րդ տարեդարձի առիթով:



Մայր Աթոռի միաբան Տ. Ներսես արք. Պոզապալյանն անդրադարձավ մեծարյալի վաստակին՝ նշելով, որ Ժիրայր Նայիրին իր գրիչը ոչ միայն ի սպաս է դրել հայ դպրության օգտին, այլեւ նրանով պայքար է մղել հանուն հայրենիքի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի: Ապա Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանն ընթերցեց հայրապետական սրբատառ կոնդակը:

*«...Մեծարգո պրն. Ժիրայր Նայիրի, Ձեր կյանքի հիշարժան այս հանգրվանը Դուք դիմավորում եք մտավորականի ազգօգուտ գործունեության հարուստ վաստակով, ճանաչված ու սիրված հավատավոր մեր ժողովրդի կողմից:*

*Տասնյակ տարիներ Դուք եղել եք պատասխանատու խմբագիրը «Արարատ» օրաթերթի՝ Ձեր ջանքերը ներդնելով, որպեսզի պարբերականը շարունակի մեր ժողովրդի զավակներին հաղորդ դարձնել սփյուռքահայ համայնքներում, Մայր Հայրենիքում եւ մեր Սուրբ Եկեղեցու կյանքից ներս տեղի ունեցող*

*...րին՝ նպաստելով նրանց հոգիներում ազգանվեր ոգու ու նկարագրի ձեւավորմանն ու պահպանմանը: Նույն նախանձախնդրությամբ Դուք այսօր հրատարակում եք «Նայիրի» շաբաթաթերթը՝ շարունակելով գնահատարժան ծառայությամբ Ձեր ավանդը բերել ազգային մեր կյանքի շինությանն ու պայծառությանը:*

*Արդյունաշատ է նաեւ Ձեր ստեղծագործական գործունեությունը, որի վկայությունը Ձեր հեղինակած եւ խմբագրած բազմաթիվ գրքերն են, հրապարակախոսական հոդվածները, հուշագրություններն ու ուսումնասիրությունները:*

*Մեզ համար մասնավոր գոհունակություն է հաստատել, որ Ձեր գործունեության ողջ ընթացքին Դուք դրսեւորել եք անկեղծ նվիրում ու նախանձախնդրություն հանդեպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: «Արարատի» էջերում հրապարակած Ձեր հոդվածներով Դուք քաջալերել եք մեր ժողովրդի զավակներին հակառակ ամեն դժվարության, անխախտ պահել հավատարմությունը Սուրբ Էջմիածնի նկատմամբ եւ որդիական պատրաստակամությամբ օգտակարություն բերել նրա շինությանն ու պայծառությանը: Մենք ժամանակին ականջալուր ու վկա ենք եղել, թե որքան բարձր էր գնահատում Ձեր եկեղեցանվեր ծառայությունները եւ էջմիածնասեր ոգին երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը՝ հայրական իր սերն ու օրհնությունը բերելով հավատավոր հայորդուդ»,-* ասվում է հայրապետական սրբատառ կոնդակում:

Շքանշանի հանձնումից հետո ներկաներին իր սրտի խոսքն ուղղեց նաեւ տիար Ժիրայր Նայիրին՝ երախտագիտություն հայտնելով Վեհափառ Հայրապետին բարձր պարգեւի համար:

«Ինձ համար չկա ավելի մեծ պատիվ, քան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հարազատ զավակ անվանվելը Մայր Աթոռի գահակալի կողմից: ...Այսօր Ձեր Սրբազնագույն Աջից ստացված այս շքանշանը վկայում է, որ ես եղել եմ Մայր Աթոռի, Հայ Եկեղեցու, Հայրենիքի հարազատ զավակը, որ իր հոգեմտավոր գործունեությամբ, իր հասարակական աշխատանքով արժանացել է այս բարձր պարգեւին եւ տիտղոսին: Ուզում եմ խոնարհաբար վստահեցնել, որ այսուհետեւ եւս անմնացորդ պիտի ծառայեմ իմ համեստ ուժերով, իմ կարողությունների չափով հայ ժողովրդի գոյության խորհրդանիշ, ինքնության պահպանման միջնաբերդ հանդիսացող Հայ Եկեղեցուն: ...Ես զինվորն եմ Հայրենիքի եւ իմ Եկեղեցու»,- մասնավորաբար նշեց Ժիրայր Նայիրին իր խոսքում:

Վերջում ներկաներին իր հայրական խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ բարձր գնահատելով եկեղեցու նվիրյալ զավակի՝ դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Հայոց եկեղեցին եւ դեպի Հայրենի երկիրը ցուցաբերած սերը եւ հավատարիմ ծառայությունը: *«Մենք գիտենք, որ Ժիրայր Նայիրին Սփյուռքի մեր էջմիածնասեր այն զավակներից է, որ կանգնած է եղել միշտ Հայրենիքի եւ Սուրբ Էջմիածնի կողքին եւ ծառայել անձնվիրումով: Դժվարին ժամանակներ էին, եւ քաջություն էր պետք խոստովանելու, հայտարարելու, որ տվյալ անձը Հայրենիքի կողքին կանգնած անձնավորություն է եւ էջմիածնասեր անհատ, որովհետեւ Հայաստանի կողքին լինել նշանակում էր կոմունիստական գաղափարախոսության ծառայելու պիտակ առնել իր վրա: Բայց քաջությամբ նրանք կանգնած էին հայրենասիրության այդ պատնեշի վրա եւ առաջնորդում էին հոծ այն խմբին մեր զավակների, որոնք քաղաքականությունից վեր եւ քաղաքականությունից դուրս իրենց հոգում կրում էին սերը դեպի դարավոր մեր Հայրենի երկիրը եւ մեր նվիրական Սուրբ Աթոռը՝ Սուրբ Էջմիածինը: ...Մենք վստահ ենք, որ այդ տարիների ընթացքին բազում հայորդիներ կրթվել, դաստիարակվել ու ներշնչվել են հայրենասիրության ու եկեղեցասիրության Ձեր ոգով: Ձեր սերունդների ոգին էր նաեւ, որ ծնեց անկախությունը մեր Հայրենիքի»,-* ասաց Հայոց Հայրապետը՝ մաղթելով, որ Աստված առավել արգասաբեր դարձնի իր գրիչը եւ բազմարդյուն՝ նվիրումն ու ջանքերը, որ տիար Ժիրայր Նայիրին ներդնում է ազգային ծառայության սուրբ գործի մեջ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

**ԶԱՔԱՐԻԱ ԶԱԳԵՑԻ**

# ՃԱՌ

## Ասված մեր Տիրոջ Համբարձման տոնի առիթով



*Սկիզբը՝ թիվ 9*

Սկիզբը՝ թիվ 9

Եվ մինչ անճառելի եւ մարմնացած Լույսը երկինք էր բարձրանում, իսկ երանելի սուրբ առաքյալները զարմացած նայում էին, ամպը Տիրոջը ծածկեց նրանց աչքերից: Ինչպես երբ Սինա լեռան վրա խոսում էր իսրայելացիների բանակի հետ, ամպը, մեգը եւ մառախուղը, շրջապատելով, պարփակում էին լեռը, եւ կամ էլ երբ կամենում էր իջնել վկայության խորանում, ամպը պարփակում էր խորանը, Հոբի հետ խոսում էր ամպի ու մրրկի միջով, իսկ մարգարեն ասում է. «Խոնարհեցրեց երկինքը եւ իջավ, եւ նրա ոտքերի տակ մեգ է», եւ՝ «Ամպ ու մեգ է նրա շուրջը»: Իր փառավոր գալստյան ժամանակ էլ բոլորի Տերը ամպով պիտի բարձրացնի Իրեն հուսացածներին Իր երկնային խորանները:

Աշակերտները հիանում էին արփիահրաշ ու գերազանց տեսիլքով, որը շրջապատում էր սուրբ եւ երանելի Ձիթենյաց լեռան գագաթը, իսկ արեգակի ոսկեճաճանչ ճառագայթները օրվա երրորդ ժամին թաքնվում էին սաստիկ ու արփիահրաշ լույսից: Այդ նորասքանչ ու հրաշափառ տեսիլքն ավելին էր, քան այն, որ առաքյալները տեսան Թաբոր լեռան վրա, ավելի գերազանց արփիագեղ ճառագայթներով, քան որ երեւաց Մովսեսին Սինա լեռան վրա, առավել էր, քան այն, որ երեւաց Եղիային Քորեբ լեռան վրա. սրանցից առավելը եղավ Ձիթենյաց լեռան վրա, սակայն Աստծո շնորհն անդրդվելի պահեց սուրբ առաքյալներին եւ չթողեց վայր ընկնել:

«Եվ ահա նրանց երեւացին սպիտակ զգեստների մեջ երկու մարդիկ»: Թվում է՝ սրանք անմարմին զորքերի երկու զորավարներն են՝ Միքայելը, որ Հնի միջնորդն ու սպասավորն էր, եւ Գաբրիելը, որ Նորի կազմողն ու մատակարարն էր. մի ժամանակ նրանք էին երեւացել Աբրահամի խորանում անժամանակ Բանի հետ, երեւացել էին յուղաբեր կանանց սուրբ գերեզմանում, իսկ այսօր այստեղ գալով՝ աշակերտներին հայտնեցին օրվա խորհուրդն ու զորությունը: Եվ սուրբ հրեշտակները, ինչպես եղան Փրկագործողի սպասավորներն ու պաշտոնյաները եւ երանելի կանանց ավետեցին Փրկչի հարությունը, այնպես էլ այսօր աղաղակեցին ընտրյալ գնդին. «Ո՛վ գալիլիացիներ, ինչո՞ւ կանգնած նայում եք երկնքին. այն Հիսուսը, որ ձեր միջից վեր բարձրացավ, պիտի գա նույն ձեւով, ինչպես տեսաք Նրա երկինք գնալը»: Քանի որ մենք միշտ սպասավորում ենք անժամանակ Աստվածորդուն, եւ երբ ձեզ կանչեց ձկնորսությունից, մենք մոտ էինք եւ գիտենք, որ սիրվում եք բոլորի Տիրոջ կողմից: Մի՛ զարմանաք, մի՛ խռովվեք եւ մի՛ վախենաք, որովհետեւ այն Հիսուսը, որ ձեր միջից երկինք վերացավ, Իր մյուս անգամ գալու ժամանակ արփիափայլ ծագմամբ ամբողջ տիեզերքին պիտի երեւա:

Այնժամ մեծ ուրախությամբ երկրպագելով՝ սուրբ առաքյալները վերադարձան Երուսաղեմ եւ սպասում էին խոստացված ավետիսին՝ Սուրբ Հոգու գալստյանը:

Իսկ մարմին առած անժամանակ Բանը՝ անստվեր լույսը, ճշմարիտ մարդեղությամբ լուսավոր եւ հրաշափառ ամպով ելավ վերին օդի միջով եւ ճանապարհ բացեց օդի հաստատության մեջ, որ երկինք է կոչվում, եւ մոտենալով թանձրամած ջրային հարկի կամարին, որ երկնքի ներքո է, Կույսից ծնված, կնքված գերեզմանից հարություն առած եւ փակ դռների միջով աշակերտների մոտ մտած մարմնով անցավ թանձրամած ջրահարկ հաստատությունը: Անմահների զորքերն ավետիս էին տալիս երկնային իշխանություններին ու պետություններին եւ ցնծալով երգում էին. «Վե՛ր քաշեցեք, իշխաննե՛ր, ձեր դռները, թող բացվեն հավիտենական դռները, եւ փառքի արքան թող ներս մտնի»: Իսկ երկնքի բարապանները, տեսնելով մարմնի մեջ անպարագրելի Բան Աստծուն, չիմացան նոր ու հրաշալի տեսիլքը, տարակուսած վարանեցին ու միմյանց ասացին. «Ո՞վ է այս փառքի արքան»: Սուրբ հրեշտակապետները հասկացան երկնային զորքերի անգետ տարակուսանքը: Ինչպես երբ մի հզոր թագավոր իր հզոր զորությամբ դիմում է թշնամու վրա, գերում նրան, ետ դարձնում նրա գերեվարածը, ավետիսով լցնում աշխարհը, մեծ հաղթությամբ վերադառնում իր քաղաքի դռների մոտ եւ չի ճանաչվում քաղաքի բնակիչների կողմից իր մարդկային հագուստների պատճառով, այնպես էլ փառքի Թագավորը հարձակվեց կամակոր վիշապի վրա, որը գերելով՝ կործանել էր մարդկային ազգը, որ իր Արարչի պատկերով էր արարվել: Խոնարհվելով՝ հագավ այս պատերազմական մարմինը, սրանով որսալով՝ կործանեց թշնամուն, նույն՝ ծառայի կերպարանքով համբարձվեց երկինք եւ Իր ճշմարիտ մարդեղությունը հրեշտակներին ցույց տվեց: Որի համար էլ հրեղեն զորքերը, անմարմին Աստծուն ծառայի կերպարանքով տեսնելով, զարհուրած հարցնում էին. «Ո՞վ է այս փառքի թագավորը», կամ՝ «Ո՞վ է սա, որ ելել գալիս է Եդոմից. նրա հագուստների կարմիրը Բոսորայից է, նա գեղեցիկ պատմուճանով է, հուժկու զորությամբ: Քո հագուստներն ինչո՞ւ են կարմիր, քո հագուստներն ասես հնձանահարի հագուստներ լինեն, որ տրորում են լեցուն հնձանը»: Մարմնացած Բան Աստված պատասխանում է. «Ես մենակ ճմլեցի հնձանը, հեթանոսներից ոչ ոք ինձ հետ չէր, բարկությամբ ճմլեցի նրանց եւ գետնին հավասարեցրի ու իմ բոլոր զգեստներն արյունաթաթախ արեցի, որ հոսում էր իմ կողից: Որովհետեւ հասել էր նրանց հատուցման օրը»: Նրա մարդկային կերպարանքը տարակուսանք էր առաջացնում երկնային անմահ զորքերի մեջ, եւ հարցնում էին. «Ո՞վ է այս փառքի թագավորը»: Պատասխան տվեցին Տիրոջ առջեւից ընթացողները. «Սա փառքերի թագավորն է, անճառելի Բան Աստված, որ խանձարուրով պատվեց Իր մարդասիրության պատճառով, իսկ այժմ համբարձվելով՝ գալիս է Հոր մոտ: Սա է փառքի թագավորը, թագավորը սերովբեների, որ խաչի վրա սպանեց մեղքը եւ այժմ համբարձվելով՝ Հոր մոտ է գալիս: Սա է փառքի թագավորը՝ Հոր եւ Հոգու փառակիցը, որ քանդեց դժոխքի բռնությունը եւ համբարձվելով՝ գալիս է Հոր մոտ: Սա է փառքերի թագավորը, քերովբեների վրա վերանստողը, որ հարություն առավ գերեզմանից եւ համբարձվելով՝ գալիս է Հոր մոտ: Սա է փառքերի թագավորը, փառքերի Տերն այնտեղ, ուր պիտի հավաքի մարդկանց որդիներին, որ Վերին Երուսաղեմ է կոչվում:

Եվ այնտեղ գալով՝ երկրպագեցին Նրան հրեշտակների զորքերը, տասնմեկ գնդերից առաջին բանակները: Երբ Տիրոջից լսեցին, թե այստեղ հրավիրվեց մարդկային փրկված ու ազատված ազգը՝ լրացնելու թերի տասներկուերորդ բանակը, մեծ ուրախություն եղավ երանելի լուսեղեն բանական բանակների մեջ, օրհնության երգեր երգեցին Արարչին՝ հավիտենից անհաղթելի Թագավորին: Այսպես ուրախացած հաճոյացան առաջին անդամները՝ հրեշտակները:

Ապա փոխվեց հրեշտակապետների՝ երկրորդ դասի մեջ, եւ երկրպագվեց ու փառավորվեց նրանց կողմից: Անցավ երրորդ դասով, մխիթարեց նրանց եւ երկրպագվեց նրանց կողմից: Բարձրացավ չորրորդ դաս, որոնք կոչվում են զվարթուններ, սփոփեց նրանց եւ, բարեբանվելով նրանց կողմից, բարձրացավ հինգերորդ դասի մոտ, որոնք կոչվում են պետություններ, ուրախացրեց նրանց եւ բարեբանվելով նրանց կողմից՝ վեցերորդ դասի մոտ բարձրացավ, որոնք կոչվում են իշխանություններ, ցնծալից ուրախացրեց նրանց եւ երանավետվելով նրանց կողմից՝ յոթերորդ երամի՝ աթոռների մոտ բարձրացավ, բերկրություն պատճառելով նրանց եւ բարեհամբավվելով նրանց կողմից՝ փոխադրվեց ութերորդ դասի՝ քերովբեների մոտ, զվարճացնելով նրանց եւ փառավորվելով նրանցից՝ բարձրացավ իններորդ դասի՝ սերովբեների հույլի մոտ, ուրախությամբ լցրեց նրանց եւ սրբաբանվեց նրանցից: Եվ այսպես՝ իններորդ դասն անցնելով եւ մարդկային կերպարանքով երեւալով բոլորին՝ բոլորին ավետեց մարդկային ազգի վեր բարձրանալը եւ երանելի զորությունների հետ նույն կարգի մեջ դրվելը: Եվ այսպես ուրախացնելով երկնային բոլոր պետություններին եւ երկնային իշխանությունների զորքերին՝ հասնելով՝ մոտեցավ անմատչելի աթոռին:

*Շարունակությունը՝ էջ 6*



**ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ**

# ՍԱՐԳԻՍ Ա ՍԵՎԱՆՑԻ

## (992 - 1019)

*Սկիզբը՝ էջ 3*

Ուռհայեցի պատմիչը նշում է, որ վրաց արքեպիսկոպոս Իլարիոնը, հորդորվելով իշխաններից, առաջին անգամ փորձեց նրան թունավորել հաղորդության ժամանակ, սակայն Դավիթ կյուրապաղատը, այդ մասին իմանալով, դեղթափ (հակաթույն) ընդունեց եւ փրկվեց: Այդ ժամանակ Իլարիոնը մտնում է Դավթի ննջարանը եւ բարձը բերանին դնելով՝ տանջախեղդ է անում: Թվում է, թե պետք է հավատալ ժամանակակից Ասողիկի եւ ոչ թե Մատթեոս Ուռհայեցու տեղեկություններին, սակայն շատ ավելի հավանական է, թերեւս, երկրորդ հաղորդումը, քանի որ կյուրապաղատի կողմից Տայոց իշխանության կտակումը Բյուզանդիային, իրոք, կարող էր առաջ բերել իշխանների խոր դժգոհությունը, որոնք մտադիր չէին կորցնել իրենց ազատությունը:

Բարսեղ Բ (Վասիլ) կայսրը, 999 թվին վերադառնալով եգիպտական արշավանքներից, ժամանեց Կիլիկիա եւ այնուհետեւ՝ Փոքր Ասիա: Իմանալով Դավիթ կյուրապաղատի մահվան մասին՝ նա անմիջապես ճանապարհվեց Մելիտենե, որտեղ հանդիպեց Սեբաստիայի հայ քահանաներին՝ արտոնելով նրանց համարձակ լինել հավատի հարցերում, ինչը խանգարվել էր հույն միտրոպոլիտի հալածանքների հետեւանքով: Հուլիսի 7-ին, երբ նշվում էր Վարդավառի տոնը, նա հասավ Բալուի եւ Քղիի կողմերը, այնուհետեւ անցավ Արշամունյաց Երիզա, որտեղ ընդունեց իրեն ներկայացած Նփրկերտի նոր ամիրային, որն Ապումսարի եղբայրն էր, հետո անցնելով Հավճիչ՝ ափխազաց Բագարատ եւ վրաց Գուրգեն թագավորներին, իսկ նրանցից հետո Վանանդի Աբաս եւ Վասպուրականի Սենեքերիմ թագավորներին: Հայոց Գագիկ Ա թագավորը նրան չներկայացավ՝ համարելով այդ իր արժանապատվությունը վիրավորող: Բարսեղ (Վասիլ) Բ-ն որոշ ժամանակ սպասելուց եւ համոզվելուց հետո, որ Հայոց թագավորն իրեն չի ներկայանա, Ուղթիսի վրայով մտավ Տայք եւ տիրեց կյուրապաղատությանը: Ընդդիմադիր իշխաններին նա դուրս բերեց Տայքից եւ ուղարկեց կայսրության տարբեր կողմերը, իսկ Իլարիոն եպիսկոպոսին ծովախեղդ արեց՝ պարանոցին քար կապելով: Առայժմ կարգավորելով գործերը Տայքում՝ նա շարժվեց դեպի Խաղտոյառիճ եւ այնուհետեւ ուղեւորվեց կայսրության մայրաքաղաք: Վրաց Գուրգեն թագավորը փորձեց նրա հեռանալուց հետո տիրել Տայքին եւ անգամ հասավ մինչեւ Մամրվան, սակայն նրա դեմ դուրս եկավ Կանիկլուս մագիստրոսը, եւ մինչեւ 1001 թ. ձմեռը տեւած կռիվներից հետո կողմերը հաշտություն կնքեցին՝ պահպանելով հին սահմանները: Հաշտությունը կնքվեց Մեծոփաց անտառապատ լեռան վրա գտնվող Սբ. Աստվածածին գյուղում:



Ասողիկը Բարսեղ Բ-ի Տայք գալու հետ կապված պահպանել է մի պատմություն՝ Տայքի ազատների եւ կայսեր հետեւակազնդի ռուս զինվորների միջեւ տեղ գտած բախման մասին: Սա բյուզանդական բանակում ծառայող ռուսական զորամասերի առաջին հիշատակությունն է Հայաստանում: Այս ընդհարումը, որ շատ է հիշեցնում մի կաթիլ մեղրի պատմությունը, ծագեց մի խուրձ խոտի պատճառով: Ռուզ (իմա՛ ռուս) զինվորներից մեկը խոտ էր տանում իր երիվարի համար, երբ Տայքի ազատներից մեկը փորձեց նրանից խոտը խլել: Նրանցից ամեն մեկն օգնության կանչեց իր յուրայիններին: Վրացի ազատները սպանեցին խոտը տանող առաջին ռուզ զինվորին, որին ի պատասխան՝ ռուզների (իմա՛ ռուսների) երեքհազարանոց զորամասը, որ Բարսեղ կայսրն օգնություն էր ստացել Կիեւյան մեծ իշխանից՝ իր քրոջը նրան կնության տալուց հետո, շարժվեց Տայքի ազատների դեմ, որոնք պարտություն կրեցին: Սպանվեցին նրանց Պատրիարք անունը կրող մեծ իշխանը, նրա Ոչոպընտրեա Գաբրիել եւ Հովհաննես որդիները, Ապուհարալի թոռ Չորտվանելը եւ շատ ուրիշներ:

Փաստորեն, սրանով ավարտվում են Սարգիս Սեւանցի կաթողիկոսի շրջանի գլխավոր իրադարձությունները: Կարելի է դրանց ավելացնել Հաշտյանքի, Խորձյանի, Ծոփքի, Բալահովտի եւ Պաղնատան տարածքում տեղի ունեցած զարհուրելի երկրաշարժը, որի հետեւանքով լեռները ճեղքվեցին, ժայռերը ջախջախվեցին, աղբյուրները ցամաքեցին, անջրդի վայրերում աղբյուրներ բխեցին, գյուղեր ու ավաններ կործանվեցին, շատերը փլատակների տակ զոհվեցին, եւ լաց ու կականն աշխարհը ծածկեց: Ավերվեցին Ճապաղջրի, Աթթախի եւ Ամիդի բերդերը: Երկրաշարժը տեղի ունեցավ 995 թվի օգոստոսի 19-ին, իսկ ցնցումները շարունակվեցին մինչեւ 996 թվականի մարտի 22-ը: Իրավացի է Մ. Օրմանյանը՝ գրելով, որ չնայած հիշատակների բացակայությանը՝ պետք է ենթադրել, որ Սարգիս կաթողիկոսը Եկեղեցու կողմից մեծ հոգածություն է հանդես բերել աղետյալների նկատմամբ:

*Շարունակելի*

***ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ԱՆԱՊԱԿ ԲԱԺԱԿԻ

## ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՆԴԱՍՏԱՆՈՒՄ

### ԱՌԱԿԱՑ ԳՐՔԻ *Թ* ԳԼԽԻ 2, 5 ՀԱՄԱՐՆԵՐԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Սկիզբը՝ 2004-ի թիվ 18-24, 2005-ի թիվ 1-6, 9*

Ղազար Ջահկեցի Հայրապետը կրկնում է իր նախորդների բացատրությունները՝ տալով խառնարան-հնձան-Ս. Կույսի որովայն զուգահեռները: *«Հնձան էր որովայն Սրբուհւոյ Կուսին եւ տեղի խառնման Աստուծոյ Բանի ընդ մարդկայնոյս բնութեան: Քանզի գինին որպէս ասացաք, նշանակէ զաստուածութիւն բանին Աստուծոյ որ խառնեցաւ ի խառնարանի անդ, այսինքն՝ յարգանդի կուսին ընդ մարդկայնոյս բնութեան»* (տե՛ս Դրախտ ցանկալի, էջ 341-342, հմմտ. **Նոր բառգիրք հայկազեան լեզուի**, երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբահօր Յ. Գաբրիէլի Աւետիքեան, Յ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Յ. Մկրտչի Աւգերեան, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 927): Այնուհետեւ ս. Գրիգոր Տաթեւացու նման Հայրապետն ասում է. *«Եւ ոչ ասէ, թէ ջուր խառնեաց ընդ գինւոյն ի յաւանդութիւն խորհրդոյն: Եւ եթէ այսպէս էր, ապա ասացեալ էր եւ զանուն ջրոյն, որպէս եւ զանուն գինւոյն»* (նույն տեղում):

Վերոգրյալ բոլոր վկայություններն էլ ցույց են տալիս, որ սուրբգրային այդ համարներում մեր նախնիք երբեք չեն տեսել ջրի խառնման պարագան: Նրանք, օգտագործելով Ս. Գրքի մեկնության այլաբանական եղանակը, այդ համարները մեկնել են որպես Հին եւ Նոր Կտակարանների միություն, նրա մեջ տեսել Աստվածորդու մարդեղության սքանչելի խորհուրդը, Նրա աստվածային եւ մարդկային բնությունների անխառն, անշփոթ միության պարագան, Ս. Պատարագի ընթացքում Տիրոջ մարմնի եւ արյան միացման պարագան եւ այլն:

Բացի այս, ինչո՞ւ են մեր եկեղեցու վարդապետներն այսպես տրամաբանում՝ լոկ մեր եկեղեցու սրբազան ավանդությունը ջատագովելու եւ մյուսներին քննադատելու համար, թե՞ ունեն նաեւ այլ պատճառներ, երբ գրում են. *«Ասեմք թէ ոչ միայն ջրոյ է խառնումն, այլ եւ կաթին եւ մեղեր... »* (նույն տեղում, էջ 340, «ԳՀ»): «Հրեական հանրագիտարանում» ընթերցելով *գինի* բառահոդվածը՝ տեսնում ենք, որ հրեաները բազմատեսակ գինիներ էին օգտագործում իրենց առօրյայում: Շատ անգամ նրանք ոչ միայն ջուր էին ավելացնում գինու մեջ, այլ նաեւ զանազան քաղցրահամ եւ անուշաբույր համեմունքներ, բալասան ու տարբեր տեսակի յուղեր, որպեսզի այն ավելի բուրումնավետ ու հաճելի լիներ (տե՛ս Encyclopedia Judaica, v. 6, , 1971, Jerusalem, p. 1418, v. 16, p. 538, հմմտ. Բառարան Սուրբ Գրոց հանդերձ պատկերօք, աշխարհացուցօք եւ տախտակօք, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 118): Ուստի «խառնեալ գինի» կամ «խառնեալ բաժակ» արտահայտությունները չնայած ամենեւին չեն բացառում ջրով խառնված լինելու պարագան, բայց համաձայն ժամանակի սովորության՝ կարող էին նաեւ լինել առանց ջրի, այսինքն՝ վերոբերյալ համեմունքներով (հմմտ. **Աբէլ քահանայ Օղլուգեան**, նշվ. աշխ., էջ 89): «Толковая Библиа»-ն այս համարում օգտագործվող գինու համար նշում է, որ այն խառնված էր ջրով կամ համեմունքներով (Толковая Библиа, или комментарий на все книги Св. Писания Ветхого и Новаго Завета, т. 1, Петербург, 1904-107, стр. 452): Այսինքն՝ կրկին դժվար է այսօր վստահությամբ պնդել, որ «խառնեալ» արտահայտության ներքո պետք է անպայման միայն ջրով խառնված լինելը հասկանալ: Խնդիրը կրկին մեկնաբանության ծիրում է:

Հաջորդ հարցը, որ մեր առաջ ծառանում է, Զատկի ժամանակ հրեաների կողմից ջրի օգտագործումն է: Ըստ մեր ընդդիմախոսների՝ Հիսուս Վերջին Ընթրիքն արեց հրեական սովորության համաձայն, որն էլ իր հերթին ենթադրում է Տիրոջ կողմից ջրի օգտագործումը:

Ընդհանրապես առկա աղբյուրներն այս հարցում բաժանվում են երկու մասի. մի մասը պնդում է, որ հրեական Զատկի ժամանակ հրեաները ջուր էին խառնում որոշակի քանակությամբ, իսկ մյուս մասը, որում նկարագրվում է այդ արարողությունը, չի խոսվում ջրի մասին: Համենայն դեպս հրեաների իսկ ծիսական գրքերում հստակորեն խոսվում է ջրի մասին: Այս մասին հսկայական տպագիր գրականություն



կա: Այնպես որ հետաքրքրվողները կարող են ծանոթանալ դրանց կամ պարզապես փնտրել ինտերնետի միջոցով: Ստույգ է մեկ բան, որ հռոմեացիներն այն ժամանակ գինուն ջուր էին խառնում, բայց Քրիստոսի ժամանակ Պաղեստինի հրեաներն անապակ գինի էին օգտագործում: Միայն հրեա ազնվականներն էին, ովքեր հետեւելով հռոմեական սովորույթին, ջուր էին խառնում իրենց գինու մեջ: Շատ հավանական է, որ մեր Տերն այս հարցում հետեւած լինի հրեական սովորությանը: Դժվար է երեւակայել, որ Հիսուս Քրիստոս, որ եկել էր մեղավորներին փրկելու, որ հաց էր ճաշակում նրանց հետ, Իր պարզ ու հասարակ աշակերտների հետ հետեւեր հրեա ազնվականության սովորույթին: Բացի այս, չպետք է մոռանալ, որ այս մասին Ավետարանը մեզ ոչինչ չի ասում: Այս խնդրի մասին ս. Գրիգոր Տաթեւացին ասում է. *«Զի յաւանդելն ոչ խառնեաց ջուր, զի թէպէտ Երուսաղէմի երկիրն այնպէս ըմպեն, բայց ոչ թէ ջուր խառնեն եւ ապա ծախեն, այլ մերձ գինւոյն եղեալ է ջուրն, զի թէ ոք կամեսցի, խառնեսցէ, ուստի յայտ է, թէ Տէրն անխառն գինի էառ, եւ թէ էր խառնեալ, ուրեմն ասէր աւետարանիչս, ուստի յայտ է, թէ ոչ է ի խորհրդոյս այսմիկ»* (տե՛ս նաեւ «ԳՀ», էջ 596): Ղազար Ջահկեցի Հայրապետը նույնպես անդրադարձել է վերոգրյալին՝ մեջբերելով Տաթեւացու հակափաստարկները (Դրախտ ցանկալի, էջ 342, այս մասին տե՛ս նաեւ «Լոյս», էջ 610):

Այնուամենայնիվ անժխտելի փաստ է նաեւ այն, որ մովսիսական ժամանակներում հրեաներն անապակ գինի էին օգտագործում, այլապես Ս. Գիրքը Զատկի մասին խոսելիս անպայման ինչ-որ տեղ ջրի խառնման մասին կհիշատակեր: Բայց Աստվածաշունչ մատյանը ջրի անունը չի տալիս, այլ գինու: Մեր եկեղեցու ջերմեռանդ պաշտպանները, իբրեւ ապացույց անապակ գինու, միշտ մեջբերում են Ծննդոց գրքի ԺԴ 18 համարը, ուր շատ հստակ ասվում է. *«Եւ Մելքիսեդեկ արքայ Շաղեմայ եհան հաց եւ գինի»*: Ինչպես տեսնում ենք, այս համարում միայն հացի եւ գինու անուններն են տրվում: Իսկ ինչպես Ընդհանրական Եկեղեցու, այնպես էլ մեր եկեղեցու հայրերն այս համարը մեկնել են որպես նախօրինակ Ս. Հաղորդության խորհրդի: Ս. Գրիգոր Տաթեւացին այս մասին ասում է. *«Մելքիսեդեկ հաց եւ գինի մատոյց պատարագ Աբրահամու եւ ոչ ջուր, որ նշանակէր զճշմարիտ պատարագն Քրիստոսի, ապա ուրեմն ոչ է պարտ խառնել ի ջուր»* («ԳՀ», էջ 595): ԺԸ դարի նշանավոր եկեղեցական գործիչ Պետրոս արք. Բերդումյանն իր «Մեկնութիւն Ծննդոց» աշխատության մեջ, մեկնելով եւ անդրադառնալով տվյալ սուրբգրային համարին, նախ զուգահեռներ է տանում Մելքիսեդեկի եւ մեր Տիրոջ միջեւ, ապա եւ ավելացնում, որ հացն ու գինին տպավորում են պատարագի սուրբ խորհուրդը: Ուստի Պետրոս սրբազանը, լինելով Հայ Եկեղեցու ջերմեռանդ պաշտպանը, հանդիմանում է նաեւ նրանց, ովքեր Հաղորդության Սուրբ Բաժակի մեջ ջուր են խառնում: *«Ջուր խառնողքն,-* եզրակացնում է նա,*- գէթ յօրինակէ աստի ամաչեսցեն»* (ՄՄ ձեռ. N 2178, էջ 34ա, տե՛ս նաեւ **Տիգրան սարկավագ Բաղումյան**, Պետրոս արքեպիսկոպոս Բերդումյան Աղամալյան Նախիջեւանցի, Մեկնութիւն Ծննդոց (ուսումնասիրություն եւ բնագիր), Ս. Էջմիածին, 2002 (մեքենագիր): Մեր եկեղեցու հայրերը նաեւ այլ սուրբգրային համարներ են բերում՝ ապացուցելու համար անապակ գինով պատարագելու մեր ավանդությունը: Այս մասին խոսում են Գր. Տաթեւացին, Պողոս Տարոնացին եւ ուրիշներ (տե՛ս «ԳՀ», էջ 595, «Ընդդէմ Թէոփիստեայ», էջ 207-208):

*Շարունակելի*

***Տիգրան սրկ. ԲԱՂՈՒՄՅԱՆ***

---

# ՇԵՆՈՒԴԱ Գ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՍ Բ

## ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ԵՎ ՆՐԱ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

*Սկիզբը՝ 2004-ի թիվ 23-24, 2005-ի թիվ 1-7, 9*

ԳԼՈՒԽ ԺԴ

### ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ԵՎ ՆՐԱՆ ՀԱՎԱՏԱԼԸ

*1. Հավատքը պետք է լինի միայն Աստծո հանդեպ:*

Այս հավատքից կախում ունեն մարդու հավիտենությունն ու ճակատագիրը: Այստեղ մենք հղում ենք Քրիստոսի կողմից ասված մի կարեւոր խոսքի. «Հավատացե՛ք Աստծուն եւ Ինձ հավատացեք» (Հովհ. ԺԴ 1): Այսպես՝ Նա հայտարարում է, որ Իր հանդեպ հավատը հավասար է Հոր հանդեպ հավատին՝ նույն հիմամբ եւ նույն կարեւորությամբ:

*2. Եթե Նրան հավատալն առաջնորդում է դեպի հավիտենական կյանք (Հովհ. Գ 16), ապա Նրան չհավատալն առաջնորդում է դեպի կորուստ:*

Ուստի Նա նաեւ ասում է. «...ոռոչհետեւ եթե չհավատաք, որ Ես եմ, ձեր մեղքերի մեջ կմեռնեք» (Հովհ. Ը 24): Նրան հավատալը կապված է կյանքի հետ, ինչպես Ղազարոսի հարությունը պատմող հատվածում Տեր Հիսուսն ասում է. «Ով հավատում է Ինձ, թեկուզ մեռնի, կապրի: Եվ ամեն ոք, որ ողջ է եւ հավատում է Ինձ, երբեք չի մեռնի» (Հովհ. ԺԱ 25-26):

*3. Նրան հավատալը փրկության խնդիր է, որից է կախված մարդու փրկությունը:*

Այդ պատճառով են սբ. Պողոսն ու սբ. Շիղան ասում փիլիպեցի բանտապետին. «Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին, եւ կփրկվեք դու եւ քո ընտանիքը» (Գործք ԺԶ 31): Անշուշտ սա կախված է նաեւ բանտապետի՝ այս հավատից բխող արարքներից, ինչպես օրինակ՝ Նրա մկրտվելուց՝ համաձայն Տիրոջ խոսքի. «Ով հավատա եւ մկրտվի, կփրկվի» (Մարկ. ԺԶ 16):

*4. Ուրեմն ո՞վ է Քրիստոսը, որ ով հավատում է Նրան, մեղքերի թողություն է ստանում:*

Կոռնելիոսի դարձը ներկայացնող պատմության մեջ Պողոս առաքյալն ասում է. «Նրա մասին են վկայում բոլոր մարգարեները, որ բոլոր նրանք, որ հավատում են Նրան, Նրա անվամբ մեղքերի թողություն են ստանում» (Գործք Ժ 43):

Պիսիդիայի Անտիոքի ժողովում



սբ. Պողոս առաքյալն ասում է. «Թող հայտնի լինի ձեզ, եղբայրներ, որ Նրանով է ձեզ մեղքերի թողություն ավետարանվում... Նրանով է ամեն հավատացող արդարանում» (Գործք ԺԳ 38-39):

Սրանից բացի, կա նաեւ սբ. Պետրոս առաքյալի խոսքը՝ ասված Հոգեգալստյան օրը հրեաներին, ովքեր հուզվելով՝ հավատում են եւ հարցնում փրկության ճանապարհի մասին: Պետրոսն ասում է նրանց. «Ապաշխարե՛ք, եւ թող ձեզանից յուրաքանչյուրը մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անվամբ՝ մեղքերի թողության համար, եւ Սուրբ Հոգու ավետիսը կընդունեք» (Գործք Բ 38): Այսպիսով, հավատն առաջնորդում է դեպի մկրտություն, որն էլ իր հերթին առաջնորդում է դեպի մեղքերի թողություն: Մեղքերի թողությունը ներառում է Տեր Հիսուսի արյան միջոցով արդարացում: Աստվածաշնչյան շատ համարներ են խոսում հավատի եւ արդարացման մասին, ինչպես օրինակ՝ Գործք ԺԳ 39 եւ Հռոմ. Ե 1: Ուրիշ համարներ էլ խոսում են Սուրբ Հոգին ստանալու համար մկրտության ներգործականության մասին:

*5. Հետեւաբար, ուղղակի կապ կա Քրիստոսին հավատալու եւ Սուրբ Հոգին ընդունելու միջեւ:*

Ով հավատում է Քրիստոսին, կարող է դառնում ընդունելու Սուրբ Հոգին, ինչի մասին Տերն Ինքն է ասում. «Ով հավատում է Ինձ, ինչպես եւ Սուրբ Գիրքն է ասում, նրա որովայնից կենդանի ջրերի գետեր կբխեն»: Նա ասաց սա Հոգու մասին, որն ընդունելու էին Իրեն հավատացողները, որովհետեւ Հոգին դեռ չէր տրվել» (Հովհ. Է 38-39):

*6. Քրիստոսին հավատալուն նախորդում է Սուրբ Հոգու ներգործությունը:*

Առաքյալն այս մասին ասում է. «Առանց Սուրբ Հոգու ոչ ոք չի կարող Հիսուսին «Տեր» կոչել» (Ա Կոր. ԺԲ 3): Սա է պատճառը, որ Կոռնելիոսի եւ նրա հետ եղածների վրա Սուրբ Հոգին իջավ նախքան նրանց մկրտվելը (Գործք Ժ 44-48): Դա մի նախապատրաստություն էր, որը տարբերվում է Սուրբ Հոգու այն էջքից, որ տեղի է ունենում ձեռքեր դնելու (Գործք Ը 17) եւ ապա սուրբ օծման միջոցով (Ա Հովհ. Բ 20, 27):

*7. Քրիստոսին հավատալու արդյունքներից մեկն այն է, որ «ով հավատա Նրան, չի ամաչելու» (Հռոմ. Թ 33, Ժ 11, Ա Պետ. Բ 6):*

Ով հավատում է Նրան, ամոթ չի կրելու Դատաստանի, այսինքն՝ Վերջին օրը:

*8. Հետեւաբար, Քրիստոսին հավատալը ոչ թե մի թեթեւ ու անկարեւոր, այլ չափազանց լուրջ ու կարեւոր իրողություն է, որից կախված է մարդու հավիտենական կյանքը:*

Տեսեք որքա՜ն խիստ է Ավետարանի խոսքը. «Ով հավատում է Որդուն, ընդունում է հավիտենական կյանքը, իսկ ով չի հնազանդվում Որդուն, կյանք չի տեսնի, այլ Աստծո բարկությունն է մնում նրա վրա» (Հովհ. Գ 36):

Ինչպես տեսանք, հավատը կապված է փրկության, մեղքերի թողության եւ Սուրբ Հոգու շնորհի հետ: Ուստի երբ խոսում ենք հավատի մասին, նկատի ունենք այն իր ողջ նշանակությամբ՝ կապված այնպիսի իրողությունների հետ, ինչպիսին են մկրտությունը, ապաշխարությունը եւ այն գործերը, որ այսպիսի հավատի պտուղներն են եւ այն կենդանի են դարձնում:

*Շարունակությունը՝ էջ 7*



# ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻՆ

## ՀՐԱՇԱԳՈՐԾ

Սբ. Հովհան Օձնեցու կերպարն արտացոլում է գտել նաեւ ժողովրդական զրույցներում, որոնք ժամանակի ընթացքում գրի են առնվել պատմիչների, բանահավաքազգագրագետների կողմից: Այդ պատումներում բանահյուսական կերպ ու ձեւ են ստացել ոչ միայն Օձնեցու կյանքի եւ գործունեության զանազան դրվագները, այլեւ ժամանակի պատմական կարեւոր անցքերն ու իրադարձությունները: Օձնեցու ապրած ժամանակաշրջանում՝ 7-8-րդ դդ., Հայաստանը երկու հարեւանի՝ Բյուզանդական կայսրության եւ Արաբական խալիֆայության գերիշխանության պայմաններում դիվանագիտական հավասարակշռություն էր պահպանում՝ հաճախակի դիմակայելով առավելապես բյուզանդացիների (ժողովրդի լեզվով ասած՝ հոռոմների) ոտնձգություններին:

Հովհան Օձնեցու մասին ավանդությունների հնագույն հիշատակողը Կիրակոս Գանձակեցին է, որը բնութագրում է նրան որպես *«այր իմաստասէր եւ սուրբ, եւ վայելուչ հասակաւ մարմնով, եւ հոգւով եւս առաւել գեղեցիկ»* (Պատմութիւն Հայոց, Եր., 1961):

Այս նկարագրին համահունչ է Հայսմավուրքի 1730 թ. ապրիլի 17-ի «Յիշատակ Սուրբ Հայրապետին Յօհաննու Օձնեցւոյն» ընթերցվածքում բերված պատմությունը, որում Հայոց կաթողիկոսի կերպարը հառնում է իր ողջ վեհությամբ: Այստեղ ասվում է, որ 717 թվականից՝ կաթողիկոսության հենց առաջին տարիներից ի վեր, սբ. Հովհան Գ Իմաստասեր Օձնեցին գնում եւ քարոզում էր ոչ միայն մեծամեծների եւ ավագանու, այլեւ ռամիկ ժողովրդի մեջ՝ հատկապես տերունական մեծ տոների ժամանակ: Համբարձման եւ Հոգեգալստյան, Վարդավառի եւ Աստվածածնի, Սբ. Խաչի երեւման, ինչպես նաեւ Քրիստոսի Ծննդյան եւ Հայտնության տոների առթիվ սբ. Հովհան Օձնեցին զարդարում էր իր վայելչագեղ հասակը շքեղ զգեստներով, եւ քանի որ բարձրահասակ ու գեղեցկադեմ անձ էր, բոլոր նրան տեսնողները երանի էին տալիս հայերին, որ այդպիսի սքանչելի հոգեւոր հայրապետ ունեն: Օձնեցու համբավը հասնում է նաեւ տաճկաց Օմար աշխարհակալ սուլթանին (իմա՝ Բաղդադի խալիֆին - Գ. Վ.), որը լսելով նրա մասին իր մեծամեծ պալատականներից՝ ցանկանում է անձամբ տեսնել Հայոց կաթողիկոսին եւ ողջույնի գիր է առաքում նրան՝ հրավիրելով իր պալատ: Իմանալով, որ Հայոց հայրապետը պատրաստվում է գալ, սուլթանը մարդիկ է ուղարկում նրան ընդառաջ եւ պատվիրում, որ վերջինս ներկայանա իրեն նույն կերպ հանդերձավորված, ինչպես որ մեծ տոների ժամանակ:

*«Եւ այնպէս եմուտ ի պալատն արքունի ոսկիակազմ խաչանիշ ականակուռ զաւազանաւն»*. ահա այսպես է նկարագրված Հայսմավուրքում Հայոց կաթողիկոսի մուտքը խալիֆի պալատ: Նույն իրադարձության առթիվ Գանձակեցին նշում է, որ խալիֆը մեծ պատվով է ընդունում Հայոց կաթողիկոսին, որն ի նշան հանդիսավորության՝ մորուքին ոսկեգույն փոշի էր ցանել. *«...վասն վայելչութեան երեսաց նորա մեծապէս պատուեց զնա, քանզի խարտեալ ոսկի եւ արկեալ զմորուօք իւրովք»*:

Թե՛ Հայսմավուրքի եւ թե՛ Գանձակեցու պատմած զրույցում Հովհան Օձնեցին Բաղդադի խալիֆին (Հեշմ ամիրա կամ Օմար աշխարհակալ սուլթան) ցույց է տալիս իր սրբությունն ու հրաշագործ շնորհը: Ընդունելով եւ պատվելով հայ հովվապետին՝ խալիֆը զարմանք է հայտնում նրա շքեղ հանդերձի առթիվ. *«Վասն Քրիստոսին ձերոյ ասէն, եթէ կարի յոյժ հեզ էր եւ խոնարհ, եւ զաղքատութիւն առաւել սիրէր, զայս յայտ առնեն եւ կարգ քրիստոնէից, զի որ նոցա առաջնորդքն են՝ զաղքատութիւն եւ զկծծութիւն առաւել մեծարեն, քան զփարթամութիւն եւ զճոխութիւն. իսկ դու ընդէ՞ր այդպէս զարդարեալ ես»*: Հայսմավուրքն էլ այսպես է ներկայացնում նույն հատվածը. *«Քրիստոսն ձեր՝ զոր դուք աստուած դաւանիք եւ աշակերտք էք նորա, եւ երեւիս գեղեցիկ զգեստիւք զարդարեալ՝ եւ ունիս աստուածային գեղեցկութիւնդ զոր տեսանեմ ի վերա բնական գունոյդ, ահաւոր եւ պայծառ տեսլեանդ յառօրեայս: Եվ այնքան, մինչ զի ոչ կարեմք հպիլ եւ համբուրել»*:

Ի պատասխան՝ Օձնեցին առանձնանում է խալիֆի հետ ու՝ *«Այս է զհանդերձ իմ»* ասելով՝ բացում է կուրծքը, եւ խալիֆը տեսնում է, որ գեղեցիկ հանդերձի տակ՝ մարմնի վրա, խարազան (մազեղեն) է հագած՝ վրան մանր մեխեր, որ շարունակ ծակոտում են մարմինը: *«Եւ տեսանէր ի ներքոյ ի մերկ անձն հայրապետին, զտատասկաձեւ գրգլեակն: Եւ անկեալ սուլտանն 'վերա ոտից սրբոյն ողջունէր զնա»*: Շատ է զարմանում խալիֆը եւ *«գովեաց զհաւատս քրիստոնեից»*՝ ասելով, որ ուզում է կատարել նրա կամքը՝ *«ինչ հաճոյ է կամաց քոց արարից»*:

Ըստ Գանձակեցու եւ Հայսմավուրքի տվյալների՝ Հայոց հայրապետը խնդրում է, որ 705 թ. հետո աքսորված հայ նախարարները հայրենիք վերադարձվեն՝ վերականգնելով նրանց ժառանգական իրավունքները: Խնդրում է նաեւ վերացնել Հայաստանում քրիստոնյաների հալածանքը, թույլ տալ հայերին քրիստոնեական հավատի ազատ դավանություն, ինչպես նաեւ որոշ իրավունքներ ապահովել Հայոց եկեղեցուն՝ ազատելով հոգեւորականությանը տարբեր հարկերից. *«Աւէ հայրապետն. Երիս իրս խնդրեմ ի քեն, որ քեզ դյուրին է տալ: Առաջինն այս. ի քրիստոնէից զոք մի՛ բռնադատեսցես թողուլ զհաւատս իւր, այլ յուրաքանչիւրս կամս թողցես. եւ երկրորդ՝ զազատութիւն եկեղեցւոյ ընդ հարկաւ մի դնիցես, եւ ի սարկաւագաց եւ ի քահանայից մի ինչ առնուցուս. եւ երրորդ՝ ուր եւ իցեն քրիստոնեայք ի տէրութեան քում, համարձակութեամբ պաշտեսցեն զպաշտօնս իւրեանց. զայս գրով տուր մեզ. եւ ամենայն ազգ իմ ծառայեսցեն քեզ»*: Հայրապետի այս խոսքերից ակնհայտ է նաեւ նրա դիվանագիտական ձիրքը: Նա, ի պատասխան իր խնդիրքի կատարման, խոստանում է հայերի հավատարմությունը խալիֆին: Եվ խալիֆը *«վաղվաղակի հրամայեաց գիր գրել ըստ խնդրոյն նորա, եւ կնքեաց մատանեաւ իւրով, եւ ետ նմա պատիւս բազումս ընդ նմա, եւ առաքեաց մեծաւ պատուով յաշխարհս Հայոց»*:

*Շարունակությունը՝ էջ 8*





*Սկիզբը՝ էջ 4*

Այնժամ ամենակալ Հայրը՝ թագավորների Թագավորն ասաց բոլորի Տիրոջը. «Նստի՛ր իմ աջ կողմում, մինչեւ քո թշնամիներին քո ոտքերի տակ պատվանդան դնեմ», որովհետեւ «Քեզ հետ է իմ սկիզբը, քեզ արշալույսից առաջ ծնեցի արգանդից, եւ Տերը, այսինքն՝ Սուրբ Հոգին, քո աջ կողմում է»:

Այսօր հրեշտակապետները՝ երկնքից եւ երանելի առաքյալները՝ Ձիթենյաց լեռից հիացած են՝ տեսնելով Տիրոջ՝ մարմնով երկինք համբարձվելը: Այսօր անժամանակ Բանը՝ Աստվածորդին, ծառայի կերպարանքով փառքով երկինք համբարձվեց եւ առաքելական հիմքի վրա հաստատեց սուրբ ընդհանրական Եկեղեցին:

# ՃԱՌ

## Ասված մեր Տիրոջ Համբարձման տոնի առիթով

Այսօր հողածին մարդկանց որդիներս միասին ձայնում ենք երկնային իշխանություններին. «Վե՛ր քաշեցեք, իշխաննե՛ր, ձեր դռները, եւ թող ներս մտնի երկնքից եկած մարմնացած անստվեր լույսը»:

Այսօր Քո փրկված Եկեղեցին բարեբանում է քեզ անմարմին բոցեղենների հետ, որոնք ձայնում էին միմյանց. «Վե՛ր քաշեցեք, իշխաննե՛ր, ձեր դռները, եւ թող ներս մտնի արքան»:

Անժամանակ Բան Աստված ժամանակի մեջ ճշմարիտ մարդեղությամբ կործանեց սատանային, այսօր հրաշալի փառքով երկինք համբարձվեց: Երկրպագելով փառավորում ենք Քեզ, անպարագրելի Բա՛ն Աստված, որ մեր փրկության համար մարմնի մեջ պարփակվեցիր եւ այսօր փառքով համբարձվեցիր երկինք՝ Հոր մոտ:

Օրհնե՛նք անհաղթելի Թագավորին, որ այսօր Ձիթենյաց լեռան վրա Իր սուրբ առաքյալներին հայրական օրհնություններ պարգեւեց եւ փառքով երկինք համբարձվեց: Բազմաչյա քերովբեների հետ բարեբանեցե՛ք Իսրայելի Աստծուն: Օրհնաբանեցե՛ք անպարագրելի Բան Աստծուն, որ մարդկային ազգի փրկության համար մարմնի մեջ պարփակվեց եւ հրաշափառ ամպով Ձիթենյաց լեռան վրայից ճանապարհ բացելով՝ երկինք համբարձվեց:

Օրհնեցե՛ք անպարունակելի Բան Աստծուն, որ մարդասիրությամբ երկիր իջավ, մարմնի մեջ պարունակվեց եւ ծառայի կերպարանքով խաչ բարձրացավ:

Երկրածիննե՛ր, նայենք բոլորի Թագավորին, որ անմայր լինելով երկնքում՝ անհայր եղավ երկրի վրա, որ այսօր Ձիթենյաց լեռան վրայից բարձրացավ եւ նստեց Իր Ծնողի աջ կողմում:

Փա՛ռք Քրիստոսի անճառելի համբարձմանը, որ այսօր լուսեղեն ամպերով երկինք բարձրացավ եւ խոստացավ Սուրբ Հոգու գալստյամբ լուսավորել սուրբ առաքյալներին: Աստվածորդի Բանը, ծառայի կերպարանքով անճառաբար ծնվելով անարատ եւ միշտ կույսից, այսօր հրաշափառ ծագմամբ երկինք համբարձվեց. երկնային պետությունների հետ բարեբանեցե՛ք Նրան: Հրեղենների հույլերի հետ, մարդկային հողածի՛ն որդիներ, այսօր երգեցեք. «Վե՛ր քաշեցեք, իշխաննե՛ր, ձեր դռները, թող բացվեն հավիտենական դռները, եւ թող ներս մտնի փառքի թագավորը»:

Այսօր սերովբեների արքան՝ արփիափայլ ծագումով, երկինք համբարձվելով, նստեց փառքի աթոռին, եւ հրեշտակապետն առաքյալներին քարոզեց Նրա մյուս անգամ ահավոր գալստյան մասին:

Սուրբ Եկեղեցու մանուկնե՛ր, երկնային տերությունների հետ բարեբանեցե՛ք անստվեր լույսին, որն այսօր հրաշափառ ծագմամբ համբարձվեց երկինք եւ նստեց Իր Ծնողի աջ կողմում: Մեր Տեր Աստված ամրացրեց մեզ Սուրբ Հոգու զորությամբ, Ձիթենյաց լեռան վրայից լուսազարդված ամպերով երկինք համբարձվեց, եւ երկնային զորքերը միմյանց ձայնեցին. «Վե՛ր քաշեցեք ձեր դռները, երկնքի՛ բարապաններ, քանի որ հաղթական իշխանությամբ եկավ հասավ փառքի թագավորը, որ Հոր կամքով իջել էր երկնքից»:

Այսօր երկինք համբարձվեց Նա, ով դրվել էր գերեզմանում. Հոր աջ կողմում նստեց Նա, ով մարդկանց բարին պարգեւեց. դեպի բարձունք դիմեց մարմնի չարչարանքներից կարմրած պատմուճանով՝ թշնամուն հնձանի պես կոխկռտելով կործանելուց հետո:

Այսօր լուսազարդ փառքով երկինք համբարձվեց՝ ասելով. «Նո՛ր ժողովուրդներ, լսե՛ք հրեշտակների ձայնը, որոնք ասում են միմյանց. «Վե՛ր քաշեցեք, իշխաննե՛ր, ձեր դռները, թող բացվեն հավիտենական դռները, եւ թող ներս մտնի Քրիստոս թագավորը՝ Հոր եւ Սուրբ Հոգու էակիցը»:

Քո խաչ բարձրանալով, Քրիստո՛ս, կործանեցիր թշնամուն, երկու գազանների՝ մահվան ու դժոխքի մեջ ճանաչվեցիր, ազատեցիր մարդկանց եւ մարմնով երկինք համբարձվեցիր, երեւացիր հրեշտակներին, փառավորվա՛ծդ երկնքում:

Երբ համբարձվեցիր, Քրիստո՛ս, ծածկվեցիր երանելի առաքյալներից, եւ հրեշտակապետը նրանց հայտնեց Քո երկրորդ գալստյան մասին, որ ամպով ես հավաքում Քո սուրբերին: Նրանց հետ նաեւ մեզ արժանի դարձրու, Քրիստո՛ս, ընդառաջ ելնելու մեծ Թագավորիդ: Եվ Քեզ Հոր եւ Սուրբ Հոգու հետ վայել է փառք, իշխանություն եւ պատիվ այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:

**Փոխադրեց Մարթա ԱՐԱԲՅԱՆԸ**

# ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇՈՑԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՄԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

## (Հեթում թագավորի 1286 թ. Ճաշոցի օրինակով)



Հայկական միջնադարյան նկարազարդ գիրքն առաջին հերթին Քառավետարանն է: Այդ գերակայությունը պահպանվեց հայկական ձեռագրական մշակույթի պատմության ողջ ընթացքում՝ սկսած ազգային դպրության ի հայտ գալու առաջին դարերից մինչեւ ԺԷ-ԺԸ դարերը:

Եթե Բյուզանդիայում ԺԲ-ԺԳ դարերում գլխավոր գիրքը, որին ուղղված էր մանրանկարիչների ստեղծագործական ներուժը, Ճաշոցն էր, եւ հունական նկարազարդ ձեռագրերից էլ հենց այդ խմբին են պատկանում առավել շքեղ եւ գեղարվեստական առումով կատարյալ օրինակները (ի դեպ, բյուզանդական վաղագույն Ճաշոցները նկարազարդ չէին, որպեսզի մանրանկարները չշեղեին ընթերցողին, բայց ժամանակի ընթացքում դառնալով ամենահարգի գիրքը՝ պատկերազարդվում էին առանձնահատուկ շքեղությամբ, թեեւ նախատեսված չէին դիտելու համար, քանի որ դրվում էին խորանում եւ դուրս էին բերվում միայն փոքր թափորի ժամանակ, իսկ ընթերցումը կատարվում էր պարզ ընդօրինակությունից), եթե նույն այդ ժամանակաշրջանում Արեւմտյան Եվրոպայում նախընտրելի գիրքը (նաեւ նկարիչների) Սաղմոսարանն էր, ապա Հայաստանում Ավետարանն էր, որ դեռեւս այդ դարերում շարունակում էր իր առաջնային դերակատարությունը: Հարյուրամյակների ընթացքում փոխվել ու հարստացել են նրա նկարազարդման գեղարվեստական սկզբունքները, փոխվել ու ընդլայնվել են պատկերաշարերը (վաղ դարերում երբեմն ընդգրկելով հինկտակարանյան առանձին տեսարաններ, ավելի ուշ, նաեւ հինկտակարանյան եւ վախճանաբանական ամբողջական պատկերաշարեր), սակայն այս ամենը վերաբերում է միայն Ավետարանի նկարազարդմանը:

Մյուս գրքերը՝ Աստվածաշունչ, Սաղմոսարան, Հայսմավուրք, Ճառընտիր, Մաշտոց, Նարեկ եւ այլն, առավել եւս աշխարհիկ բովանդակության ձեռագրերը, ընդհանուր առմամբ հազվադեպ եւ համեմատաբար համեստ էին նկարազարդվում:

Սակայն սխալ կլիներ մտածել, որ դրանք ընդհանրապես չէին նկարազարդվում: Այն, որ մեզ են հասել փոքրաքանակ նկարազարդ օրինակներ (ընդ որում, համեմատաբար ավելի ուշ շրջանի), վկայում է, որ այդօրինակ գրքերը ի սկզբանե քիչ էին նկարազարդում: Այդ պատճառով էլ պահպանված օրինակները հետաքրքիր ու արժեքավոր են, քանզի ոչ միայն պատկերացում են տալիս տարաբնույթ ձեռագրերի նկարազարդման սկզբունքների մասին, այլեւ ընձեռում հնարավորություն ավելի լայն ընդգրկմամբ վերականգնել հայկական մանրանկարչության պատմությունը, որը եղել է շատ ավելի տարողունակ ու բազմազան, քան թվում է առաջին հայացքից:

Սույն հոդվածում կամենում ենք խոսել Ճաշոցի մասին:

Ճաշոցը ժամակարգության գլխավոր գրքերից է եւ ողջ տարվա ընթացքում ընթերցվում է եկեղեցում՝ պատարագների ժամանակ: Հայկական եկեղեցական ծիսակարգում Ճաշոցը երեւան է եկել ազգային դպրության արշալույսին: Երբ Ե դարի սկզբում ստեղծվեց հայոց այբուբենը, եւ թարգմանվեց Աստվածաշունչը, եկեղեցական գործիչների առջեւ խնդիր դրվեց համակարգելու տարվա տոների շարքը եւ կազմելու ծիսական մատյանները: Դրանց մեջ առաջիններից մեկը Ճաշոցն էր, որի կազմավորումը Ֆ. Կոնիբերը վերագրում է 464-468 թվականներին: Հայկական Ճաշոցը (հայկական Ճաշոցի մասին տե՛ս Conybear F. C., Rituale Armenorum, Oxford, 1905, Appendix II, p. 507-527, Renoux Ch., Le codex armenien Jerusalem, 121. Patrologia Orientalis. t 35/1 et 36/2, Turnhout 1969-1971. Ռընու Շ., «Ճաշոց» գրքի ծագումն ու զարգացումը, Պատմաբանասիրական հանդես, 2, 1987, էջ 28-45, ֆրանսերենից թարգմանությունը՝ Ա. Բոզոյանի, Le Lectionnaire de Jerusalem on Armenie, Le Casoc. I. Introduction et liste des manuscrits (par Ch. Renoux, Tournhout, 1989) հետեւում է այսպես կոչված երուսաղեմյան խմբագրությանը (Շ. Ռընուն ենթադրում է, որ Սահակ կաթողիկոսը, որին ավանդությունը վերագրում է առաջին ծեսերի օրինադրումը, պատահական չէ, որ դիմել է երուսաղեմյան կարգին. դրանով նա ցանկացել է հակադրել քրիստոնեության մայրաքաղաքի հեղինակությունը հունական եւ ասորական եկեղեցիների ազդեցությանը)՝ ներառելով Հին եւ Նոր Կտակարանների հնուց կիրառվող ծիսական ընթերցվածքները: Հետագա դարերի ընթացքում Ճաշոցի խմբագրությունը որոշ փոփոխություններ ու լրացումներ կրեց (ինչը բնականաբար ազդեց Ճաշոցները զարդարող մանրանկարների կազմի եւ բնույթի վրա)՝ ընգրկելով, ի տարբերություն հունական եւ արեւմտաեվրոպական Ճաշոց-Ավետարանների, ոչ միայն ավետարանական, այլեւ հինկտակարանյան իրադարձությունների պատկերները:

Իբրեւ կանոն, հայկական Ճաշոցները զարդարվում էին բավական համեստ՝ գլխազարդերով ու լուսանցազարդերով: Հայկական նկարազարդ Ճաշոցի՝ մեզ հասած վաղագույն օրինակը 1286 թվականից է: Հեթում Բ կիլիկյան Հայոց թագավորի պատվերով ստեղծված այդ ձեռագիրն աչքի է ընկնում գեղարվեստական զարդարվածության բացառիկ ճոխությամբ: Նրա շուրջ



500 թերթերից գրեթե բոլորը նկարազարդված են սյուժետային մանրանկարներով՝ էջով մեկ, տեքստի մեջ, լուսանցքներում ունեն զարդարուն անվանաթերթեր, գլխազարդեր, գլխատառեր եւ լուսանցազարդեր:

*Շարունակությունը՝ էջ 8*

---

# ՇԵՆՈՒԴԱ Գ
# ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՍ Բ

## ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ԵՎ ՆՐԱ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

*Սկիզբը՝ էջ 5*

*9. Այսպիսի հավատը, ինչպես ասվեց, կապված է նաեւ մկրտության հետ՝ վերջինիս հոգեւոր ամբողջ ներգործականությամբ հանդերձ:*

Չի կարող մկրտություն կատարվել առանց դրան նախորդող հավատի: Ուստի երբ եթովպացի ներքինին խնդրեց մկրտվել, Փիլիպպոսը նրան հարցրեց. «Եթե ամբողջ սրտով հավատում ես, կարելի է», եւ ներքինին պատասխանեց. «Հավատո՛ւմ եմ, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է» (Գործք Ը 37):

Քաջ հայտնի է, որ մանուկները մկրտվում են իրենց ծնողների հավատով:

*10. Քրիստոսի հանդեպ հավատն է Ավետարանի գրման նպատակը:*

Սբ. Հովհաննես Ավետարանիչն իր հիշատակած հրաշքների մասին ասում է. «Սակայն այսքանը գրվեց, որպեսզի հավատաք, որ Հիսուսը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, եւ որպեսզի հավատալով՝ հավիտենական կյանքն ընդունեք Նրա անունով» (Հովհ. Ի 31):

*11. Այս հավատն Աստծո որդի դառնալու իրավունք է տալիս հավատացողին:*

Որովհետեւ հավատալուց հետո անձը պետք է ծնվի ջրից ու Հոգուց (Հովհ. Գ 5): Ուստի Սուրբ Գիրքն ասում է. «Իսկ ովքեր ընդունեցին Նրան, նրանց իշխանություն տվեց Աստծո որդիներ լինելու, նրանց, ովքեր կհավատան Նրա անվանը» (Հովհ. Ա 12):

***Եզրակացություն***

Ոչ մի մարդ, ով էլ լինի, չի կարող այս բոլոր հոգեւոր պարգեւների աղբյուրը լինել այն անձի համար, ով հավատում է իրեն, որովհետեւ այսպիսի պարգեւներն առնչվում են հավատացողի հավիտենական կյանքի հետ, նրա եւ Աստծո ու Եկեղեցու միջեւ հարաբերության հետ, ուր Աստծո հանդեպ նա հանդես է գալիս իբրեւ զավակ, իսկ Եկեղեցու հանդեպ՝ իբրեւ սրա անդամը՝ հավատի եւ մկրտության միջոցով:

*Ի վերջո ո՞րն է Քրիստոսի հանդեպ այս հավատի նպատակը:*

Մենք հավատում ենք, որ Հիսուսը Քրիստոսն է. որ Նա Աստծո Որդին է (Հովհ. Ի 31). որ Նա Միածինն է (Հովհ. Գ 16, 18)՝ այս բառի իմաստի մեջ ներառված աստվածային բոլոր հատկանիշներով: Մենք հավատում ենք, որ Նա Բանն է (Լոգոսը), այսինքն՝ Աստծո բանական արտաբերությունը կամ Աստծո խոսքը: Մենք հավատում ենք, որ Նա Հոր մեջ է, եւ Հայրը՝ Նրա մեջ (Հովհ. ԺԴ 10-11). որ ով տեսնում է Քրիստոսին, Հորն է տեսնում (Հովհ. ԺԴ 9). որ Նրա մեջ է կյանքը (Հովհ. Ա 4, Ա Հովհ. Ե 11). որ Նա աշխարհի Փրկիչն է (Հովհ. Դ 42, Մատթ. Ա 21), եւ որ Նա մեր մեղքերի քավությունն է (Ա Հովհ. Դ 10, Բ 2):

Մենք հավատում ենք նաեւ Նրա խոսքերին եւ մեր փրկության համար Նրա սահմանած ճանապարհին:

*Այս ամենը (որին ավելացնում ենք Նրա աստվածային հատկանիշների հանդեպ հավատը) ցույց է տալիս Քրիստոսի Աստված լինելը:*



ԳԼՈՒԽ ԺԵ

### ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԵՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՂՈԹՔԸ

Տեր Հիսուսն ընդունեց ժողովրդի երկրպագությունն Իրեն, որը ոչ թե պարզապես հարգանքով խոնարհում էր Նրա առաջ, այլ իրական երկրպագության մատուցում: Սա տեղի էր ունենում կա՛մ Նրա հանդեպ հավատի խոստովանության ժամանակ, կա՛մ ինչ-որ հրաշքի:

1. Ի ծնե կույր մարդու աչքերը բացելու հրաշքի ժամանակ, երբ Տերը նրան ասաց, որ հավատա Իրեն իբրեւ Աստծո Որդու, կույրը պատասխանեց. «Հավատո՛ւմ եմ, Տե՛ր», եւ երկրպագեց Նրան (Հովհ. Թ 38): Եվ Քրիստոսն ընդունեց մարդու՝ հավատալու պահին եղած այս երկրպագությունը:

2. Երբ Տերը քայլում էր ծովի ջրերի վրայով եւ Իր աշակերտ Պետրոսին եւս քայլել տվեց, «նավակում գտնվողները մոտեցան երկրպագեցին Նրան՝ ասելով. «Արդարեւ Դու Աստծո Որդին ես» (Մատթ. ԺԴ 33): Եվ Նա ընդունեց այս երկրպագությունը նրանցից:

3. Սբ. Պետրոսը մեծաքանակ ձկան որսի հրաշքից հետո, ընկնելով Տիրոջ ոտքերի առաջ, ասաց. «Հեռացի՛ր ինձանից, Տե՛ր, ես մեղավոր մարդ եմ» (Ղուկ. Ե 8): Տերն ընդունեց Պետրոսի՝ Իր առջեւ ընկնելն ու Իրեն ուղղված «Տեր» կոչականը եւ կանչեց նրան լինելու մարդկանց որսորդ:

4. Արյունահոսությունից տառապող կինը բժշկվելուց հետո մոտեցավ եւ ընկավ Նրա առաջ (Մարկ. Ե 33):

5. Ժողովրդապետերից մեկը՝ Հայրոս անունով, Տիրոջ ոտքերն ընկավ՝ ասելով. «Դուստրս մահամերձ է. եկ դի՛ր ձեռքդ նրա վրա, որպեսզի բժշկվի եւ ապրի» (Մարկ. Ե 23): Երկրպագությունն այստեղ կապված է այն հավատի հետ, որ Քրիստոսը կարողություն ունի կենդանացնելու մեռյալին պարզապես ձեռքը նրա վրա դնելով: Եվ Տերն իսկապես հարություն տվեց Հայրոսի դստերը (Մարկ. Ե 41-42):

6. Տեր Քրիստոսն Իր հարությունից հետո երկրպագություն ընդունեց Մարիամ Մագդաղենացուց եւ մյուս Մարիամից (Մատթ. ԻԸ 9):

7. Նաեւ տասնմեկ առաքյալները երկրպագեցին Տիրոջը, երբ տեսան Նրան հարություն առած (Մատթ. ԻԸ 17): Հարության հրաշքը ամենամեծ հրաշքներից մեկն էր, ուստի առաքյալներն ու կանայք այդ հրաշքից իրենց ազդված լինելը ցույց տվին Տիրոջ առաջ երկրպագությամբ:

8. Արեւելքից եկած իմաստունները նույնպես երկրպագեցին՝ ընկնելով մանուկ Հիսուսի առաջ (Մատթ. Բ 11):

9. Այստեղ հարկ է հիշել նաեւ սբ. Պողոս առաքյալի հետեւյալ խոսքը. «*... որպեսզի Հիսուս Քրիստոսի անունով իջնի ամեն ծունր՝ երկնայինների, երկրայինների եւ սանդարամետականների, եւ ամեն լեզու խոստովանի, որ Հիսուս Քրիստոսը Տեր է ի փառս Հայր Աստծո*» (Փիլ. Բ 10-11):

Այսպիսով, այն, որ Տեր Հիսուսն ընդունեց Իրեն տրված երկրպագությունը մարդկանցից՝ արտասովոր հրաշքների եւ Իրեն իբրեւ Աստծո Որդի դավանելու դեպքերի ժամանակ, հրեշտակներից եւ երկնքի ու երկրի բոլոր արարածներից, ի թիվս որոնց՝ առաքյալից, ապացույց է Նրա Աստվածության:

*Ինչպես որ Նա ընդունեց երկրպագությունը, ընդունեց նաեւ Իրեն ուղղված աղոթքը:*

10. Տեր Հիսուսն ընդունեց Իրեն ուղղված «Տեր, Տեր» կոչականը (Մատթ. Է 22):

11. Նույնիսկ Հորն ուղղված աղոթքների մասին խոսելիս Նա սովորեցնում է, որ դրանք այնժամ պատասխան կստանան, երբ կատարվեն Իր անունով: Նա ասում է Իր առաքյալներին. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ էլ որ Իմ անունով խնդրեք Իմ Հորից, կտա ձեզ: Մինչեւ այժմ ոչինչ չեք խնդրել Իմ անունով. խնդրե՛ք եւ կստանաք, որպեսզի ձեր ուրախությունը կատարյալ լինի» (Հովհ. ԺԶ 23-24):

12. Նա նույնիսկ ասում է. «Եվ ինչ էլ խնդրեք Իմ անունով, կկատարեմ, որպեսզի Հայրը փառավորվի Որդիով: Եթե Իմ անունով որեւէ բան խնդրեք, կկատարեմ այն» (Հովհ. ԺԴ 13-14):

«Կկատարեմ» բառի կրկնությունն այստեղ նշանակում է, որ Նա Ինքն է պատասխանելու աղոթքին, ո՛չ ինչպես վերոհիշյալ նախորդ համարում, ուր ասում է. «... ինչ էլ որ Իմ անունով խնդրեք Իմ Հորից, *կտա* ձեզ»: Այստեղ Քրիստոսն Ինքն է տվողը, որպեսզի Հայրը փառավորվի Որդիով:

*Շարունակելի*

***Թարգմանությունը՝ Ս. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԻ***

# ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇՈՑԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՄԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

## (Հեթում թագավորի 1286 թ. Ճաշոցի օրինակով)



Սկիզբը՝ էջ 7

Թեեւ մեզ հայտնի չեն Հեթումի Ճաշոցից ավելի վաղ կամ համաժամանակյա հայկական նկարազարդ այլ Ճաշոցներ, սակայն անհավանական է թվում, որ այդ ձեռագիրը հայ վարպետների համար Ճաշոցի նկարազարդման առաջին փորձը լիներ, քանզի նրա նկարազարդման համակարգը վկայում է հաստատուն ավանդույթի մասին: Այդ համակարգը բավական տրամաբանական է: Ճաշոցը բաղկացած է ութ բաժնից, որոնք համապատասխան են հայկական ծիսական տարվա ութ փուլերին (Болотов В. В. Об армянском церковном годе// Христианский Восток, 1912, т. 1, вып. 3, с. 267): Ի դեպ, գոյություն ուներ հայկական ծիսական տարվա բաժանման մեկ այլ՝ չորս փուլանի համակարգ, երբ հիմք էին ընդունվում ոչ թե տոները, այլ պահքերը (դրա վրա իմ ուշադրությունն է հրավիրել արվեստաբան Աստղիկ Ստամբոլցյանը): Եվ հավանաբար բաժանման այդ սկզբունքն է կիրառվել ԺԴ դարի Ճաշոցում, որը ուսումնասիրել է Ս. Տեր-Ներսեսյանը (Der Nersessian S. An Armenian Lectionary of fourteenth century. Idem. Etudes byzantines et armeniennes, Paris, t. I, p. 654), որոնցից յուրաքանչյուրը սկսվում է եկեղեցական մեծ տոներից մեկով: Ճաշոցն ունի ութ բաժին: Նույնիսկ ամենահամեստ զարդարանք ունեցող Ճաշոցներում, օգտագործողներին հարմար լինելու համար, սկզբնափուլերն ու ընթերցվածքները, մեծ տոները եւ սրբոց հիշատակության օրերն այս կամ այն կերպ զատորոշված են գեղարվեստական միջոցներով՝ օրնամենտալ գլխազարդերով եւ գլխատառերով, լուսանցազարդերով կամ փոքրիկ մանրանկարներով: Այս կարգը Հեթումի Ճաշոցում ստանում է բացառիկ հարուստ ու կատարյալ տեսք: Ութ բաժիններից յուրաքանչյուրը ազդարարվում էր տվյալ տոնին համապատասխան անվանաթերթային մանրանկարով եւ հանդիպակաց թերթում գտնվող հարուստ զարդարված անվանաթերթով: Իսկ բաժինների մեջ նույն ձեւով ազդարարվում էին նաեւ քրիստոնեական մյուս մեծ տոները: Ավետարանական երկրորդական իրադարձությունները, նաեւ հինկտակարանյան դրվագները մանրանկարված են տեքստի մեջ եւ լուսանցքներում: Մարգարեների եւ աստվածաշնչական մյուս գրքերի հեղինակների պատկերները, սրբերի եւ նահատակների դիմանկարներն ու նրանց կյանքի տեսարանները, եկեղեցական պատմության դրվագները հարակից են ամենօրյա ընթերցվածքներին եւ սրբոց հիշատակությունների տեքստերին, իսկ գլխազարդերը նշում են տոնական եւ եկեղեցական արարողակարգերի կանոնները:

Ցավոք, Հեթումի Ճաշոցն այսօր զուրկ է նախկինում իրեն զարդարող էջով մեկ մանրանկարների մեծ մասից: Ակներեւ է, որ քրիստոնեական գլխավոր տոների պատկերներով այդ թերթերը հատկապես հրապուրիչ են եղել գեղանկարչության «սիրահարների» համար, քանզի դրանք կարելի էր կախել պատին՝ իբրեւ սրբապատկեր:

Ձեռագրագիտական հետազոտությունը պարզեց, որ կորուսյալ թերթերից շատերը հանվել են ձեռագրից վերջին վերանորոգումից հետո: Այդ են վկայում կտրված թերթերի չսոսնձված կռնակները: Դրանք տեքստային թերթեր չեն եղել (քանի որ տեքստում բաց թողնված հատվածներ չկան), եւ հետեւաբար դրանց վրա պետք է լինեին էջով մեկ մանրանկարներ: Այդ կռնակները (վեց դեպքում) գտնվում են պահպանված անվանաթերթերից առաջ, որոնց հետ նախկինում ընդհանուր բացվածք են կազմել: Համեմատելով այդ անվանաթերթերի տեքստերը՝ դժվար չէ պարզել կորուսյալ մանրանկարների բովանդակությունը, որը հաստատվում է նաեւ տոների օրացուցային հաջորդականության համապատասխանություններով:

Փորձենք հնարավորության սահմաններում վերականգնել Ճաշոցի՝ տեքստային եւ էջով մեկ արված մանրանկարների նախնական ամբողջական շարքը:

Ճաշոցը բացվում է Բարսեղ Մեծի դիմանկարով, որը ձեռագրի յուրատեսակ ճակատազարդն է: Բարսեղ Մեծի կերպարի ընտրությունը, որպես տիտղոսաթերթային մանրանկար, բացատրվում է երկու պատճառով. Հայոց Եկեղեցին որպես օրինակ վերցրել է նրա կազմած Պատարագամատույցը, եւ երկրորդ. հայկական եկեղեցական տարվա սկիզբը համընկնում է այդ սրբի հիշատակության օրվա հետ: Սկզբնական, ներածական թերթի դեր է կատարում դիմանկարին հաջորդող՝ առաջին անվանաթերթը: Պատահական չէ, որ հենց այդտեղ է գտնվում պատվիրատուի ընտանեկան դիմանկարը:

*Շարունակելի*

***Իրինա ԴՐԱՄԲՅԱՆ***

***Արվեստագիտության դոկտոր***



---

**ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ**

# ԻԳԴԻՐԻ ԱՐԱԳԻԼՆԵՐԸ

*Ու Բրեստի դաշնագրով դավադիր*
*Արեւելյան Հայաստանը կես արին՝*
*Թուրքին տվին Կարս, Արդահան ու Իգդիր,*
*Նախիջեւանն ու Արցախը՝ թաթարին:*

*Երբ ճայթեցին հրանոթ ու հրացան,*
*Հին Իգդիրի բարդիներից դարավոր,*
*Թեւին տըվին, հայերի հետ հեռացան*
*Հավատարիմ արագիլները բոլոր:*

*Եվ հիշելով գաղթի զարհուր ու կական՝*
*Ետ չըդարձավ էն թռչունը տարագիր.-*
*Ո՞ւր գնացիր, ինչո՞ւ դարձար գաղթական,*
*Հե՜յ, արագիլ, հայի պանդուխտ արագի՜լ:*

*Ու չվեցին ու հեռացան բընազուրկ.*
*Անցնող տարում հաջորդում էր գալ տարին,*
*Բայց չտեսան էլ Իգդիրում բուրդ ու թուրք*
*Ոչ մի լագլագ բարձր բարդու կատարին:*

*Շա՜տ գարուններ եկան-անցան վառ, ծըպտուն,*
*Ու շվարած ծեր բուրդը հա կըգոչեր*
*»Հայու տընկած բարդու ծառեր, հայու տուն-*
*էն թռչունն էլ հայու լագլագը հո չէ՞ր«:*

*Ու մինչ օրըս բարդիներին երկնաքեր*
*Դեռ մընում են հին բները խարխըլված,-*
*Որտե՞ղ ես դու պատըսպարում քո ձագեր,*
*Որ չես դառնում քո Իգդիրը, ա՜խ, խըլված:*

*Ու հայրենի բընից եղած դատարկուն՝*
*Ո՞ր ժայռին ես սըրում կըտուց ու մագիլ.*
*Օ՜ձն է նստել բախտիս վրա ահարկու,*
*Որտե՜ղ ես դու վիշապաքաղ արագի՜լ:*

**Այս եղելությունն ինձ պատմեց անվանի հայագետ-ազգագրագետ Սարգիս Հարությունյանը:**



---

# ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻՆ ՀՐԱՇԱԳՈՐԾ

*Սկիզբը՝ էջ 6*

Ազգագրագետ-բանահավաք Երվանդ Լալայանը, նկարագրելով խալիֆի հետ հանդիպման նույն դրվագը, ասում է, թե՝ մինչ խալիֆն ապշած նայում էր, Օձնեցու մարմնից արյան մի կաթիլ է ցայտում խալիֆի կույր աչքին, եւ աչքն իսկույն բացվում է: Հետո Օձնեցին բռնում է խալիֆի բորոտ ձեռքերն ու տանում իր ծոցը. ձեռքերն անմիջապես բժշկվում են: Այս հրաշքներից հիացած, խալիֆը խոստանում է կատարել Օձնեցու խնդիրքը: Իմանալով, որ հայրապետին զորք է հարկավոր Հայաստանում գտնվող բյուզանդական վերակացուին ու զինվորներին վռնդելու համար, խալիֆը խոստանում է դրամ տալ, որ Օձնեցին այդ դրամով զորք պատրաստի: Սուրբը համաձայնում է: Հետո թղթի կտորի վրա մի քանի խոսք է գրում եւ տալիս խալիֆին, որ դրա քաշով մեկ ոսկի տա իրեն: «Խալիֆը ծիծաղելով ձգում է այդ թուղթը մի փոքրիկ կշռի նժարի մեջ եւ մյուսում ոսկիներ դարսում, բայց որքան ավելացնում է, թուղթը չի կշռվում: Հրամայում է մի քիչ ավելի մեծ, հետո՝ ավելի մեծ եւ ի վերջո՝ ամենամեծ կշեռքը բերել, եւ երբ յուր գանձերը չեն կարողանում կշռել այդ մի կտոր թուղթը, հրամայում է հինգ հարյուր զինվոր տալ: Օհան Օձնեցին զորքն առած գալիս է, եւ երբ կամրջից պիտի անց կենային, դիտում է, թե որի պատկերը գետում անգլուխ է երեւում, եւ սրանից գուշակելով, որ այդ զինվորին վիճակված է պատերազմում մեռնել, վերադարձնում է խալիֆին եւ միայն երեք հարյուր զինվոր առած գնում է» (Բորչալուի գավառ, Երկեր, հ. 3, Եր., 2004, Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969):

Ե. Լալայանն այստեղ՝ տողատակում, հետեւյալ ծանոթագրությունն է ավելացնում. «Օհան Օձնեցու մասին եղած ավանդությունները սաստիկ տարածված են. պ. Քաջբերունուն Շարուր-Դարալագյազի գավառում այս նույն պատմությունը պատմելիս ավելացրել են. երբ արաբական զորքը կամուրջն անց կացավ, շարքով կանգնեց, եւ նրան միացավ հայկական զորքը, այս ժամանակ Օհան Օձնեցին յուրաքանչյուր զինվորի՝ թե՛ հայի եւ թե՛ արաբի առանձին մոտենալով, համբուրեց նրանց գագաթի մազե փնջիկը: Փնջիկի մեջտեղ, ուր դիպչում էին Օձնեցու շրթունքները, կլոր ոսկի դուրս եկավ, որից եւ ծագում է կըզըլբաշ կոչումը, այն է՝ ոսկեգլուխ: Ուրեմն՝ հայերի գագաթի մազափնջի մեջտեղի սափրած բոլորակը, որ հին ժամանակներում սովորական էր եւ այժմ վերացել է, համապատասխան է Օձնեցու շրթունքներով դրոշմած ոսկուն» («Փորձ», 1881, թիվ 4):

Դրվագի ավարտն այսպես է. երբ Օձնեցու առաջնորդությամբ զորքը գնում էր, երկնքից մի խաչանիշ թուր է ընկնում, Օձնեցին վերցնում է թուրն ու կապում մեջքին. տեսնելով այդ հրաշքը՝ բյուզանդացիք հուսահատ փախչում են: Գանձակեցին նույն նկարագրությանը հավելում է. թե ինչպես զորքը «*եկեալ հալածեաց զամենայն Յոյնս՝ որք էին յաշխարհին Հայոց, եթէ վարակացուք, եթէ զինուորք. եւ նոցա փախուցեալք այնքան շտապով, մինչեւ զգանձս եւս անգամ ոչ ժամանել տանել ընդ իւրեանս*»: Այսպիսով, բյուզանդական զորքը փախուստի է մատնվում եւ նույնիսկ ավարն ու գանձերը չի հասցնում տանել Հայաստանից:

Օձնեցին հալածում է նրանց եւ գերի բռնում հունաց պատրիարքին, որը սպառնացել էր, թե եռացրած ջրի մեջ է ձգելու Օձնեցուն: Օհան Օձնեցին, մի կաթսա ջուր եռացնելուց հետո դիմելով հունաց պատրիարքին, ասում է. «Սպառնացել էիր ինձ եռացրած ջրի մեջ ձգել. ես այդ չեմ անի, միայն հրամայում եմ, որ գոնե այս խաչը ձգես ջրի մեջ ու հանես»: Հունաց պատրիարքը վախենում է եռացրած ջրում այրել իր ձեռքը եւ հրաժարվում է: Օհան Օձնեցին խաչակնքում է ջուրը, եւ խաչը ինքն է ձգում ջրի մեջ եւ հանում այնտեղից՝ առանց վնասվելու: Հունաց պատրիարքը, հետեւելով Օձնեցու օրինակին, ձեռքը ջուրն է մտցնում, բայց իսկույն խաշվում է: «Այդքանը քեզ բավական է իբրեւ պատիժ»,- ասում է Օձնեցին եւ ազատ է արձակում նրան: Հույն վարդապետը, որը պատրիարքի հետ էր, այս հրաշքը տեսնելուց հետո թողնում է պատրիարքին եւ Օձնեցու հետ գնում Ճգնելու: Այժմ էլ Օհան Օձնեցու վանքի հարավային կողմում հունական տապանագրով մի գերեզման են ցույց տալիս, ուր, ասում են, ամփոփված է վերոհիշյալ վարդապետի մարմինը (Լալայան-Ղանալանյան):

*Շարունակելի*

***Դերենիկ Վարդումյան***
*ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ*

***Գոհար Վարդումյան***
*ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԴԿ

**հեռախոս՝**
**(0+31) 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. տպագր. 1.6.2005 թ.

**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**